ԵՐԿԻՐ

ԱՊՐԻԼ 26- ՄԱՅԻՍ 2
2002 #5

Ապրիլ

Ապրիլի 23-ին ՀՅԴ Հայաստանի երիտասարդական եւ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունները, ավանդույթի համաձայն, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգեցին ջահերով երթով, որը դարձել է ազգային իրավունքների պաշտպանության, արդարության, հայ երիտասարդության վճռականության ու աներերության խորհրդանիշ:

Հազարից ավելի երիտասարդներ Ազատության հրապարակից քայլեցին մինչեւ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հերթական անգամ ավետելու բոլորին, որ իրենց կամքը աներեր է: «Ապրիլի 24-ը մեզ համար պետք է լինի համախմբման եւ ոգեկոչման օր՝ հանուն հարատեւ պայքարի, հանուն մեկ ու միասնական Հայաստանի վերակերտման»,- ասվում էր տարածվող հայտարարությունում:

Ծիծեռնակաբերդում, Մեզ եղեռնի հուշահամալիրի անմար կրակի մոտ տեղի ունեցավ ՀՅԴ ՀԵՄ նորագիրների խոստման եւ երեսուն երիտասարդների՝ ՀՅԴ շարքերն անցնելու երդման արարողություն:

«Հաշտարարների» դավադրությունը

Համառությունը մարդկային դրական հատկանիշ է, երբ այն չի վերածվում կույր հաստակողության, որը պարզ լեզվով այլ բառով է բնորոշվում...

Գրեթե նույն իրավիճակն է արդեն մեկ տարի մեր Ժողովրդի քաղաքական, հասարակական կյանքը փոթորկող, այսպես կոչված «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» անդամների ու այդ խմբակի հայ թե օտար ճարտարապետների գործելակերպում:

Ամիսներ շարունակ գաղտագողի, օտար սենյակներում նախագծված ու մշակված ծրագիրը ունի հեռուն գնացող ու աշխարհաքաղաքական սեփական շահերն հետապնդող նպատակ. տարածաշրջանում արհեստական «հաշտեցման» մթնոլորտում հասնել ամբողջական գերակայության եւ այդ խմբակի գոյությամբ ազատվել միջազգային քաղաքական օրակարգում իր մնայուն ու կարեւոր ներկայությունը ունեցող Հայոց ցեղասպանության հարցից: Հակառակ պարագայում, եթե նպատակը լիներ մարդկային ու ազգային իրավունքի, արդարության վերահաստատումը կամ ամբողջական փոխըմբռնման ու համերաշխության հաստատումը, ապա հենց նույն տերությունները ձեռնամուխ կլինեին այն բանին, որ իրենք կատարեին առաջին ու վճռական քայլն այդ ուղղությամբ:

Այդ նպատակի իրականացման համար պետք էր գտնել մի քանի հայազգիներ, որոնք իրականում չէին էլ կարող շատ լինել: Ավելի ստույգ՝ այդ մտայնության կրողները մի քանի մարգինալ շրջանակներ են, որոնց վրա կարելի էր հենվել, եւ այդպես էլ վարվեցին: Իհարկե, ցանկությունն ու մտադրությունը շատ ավել մեծ ու տարողունակ էին, սակայն՝ անիրագործելի: Եվ այդ շրջանակի փոքրաթիվությունը, նրանց «առաքելության» արհեստականությունը պատճառ դարձան, որ հայությունը իր գրեթե բոլոր քաղաքական, աշխարհագրական հատվածներով ընդդիմացավ «հաշտարար» հանձնախմբի ձեւավորման ու գործունեության նախաձեռնությանը:

Այդ «հաշտեցման» արհեստականությունը սկզբից արդեն իրեն զգալ տվեց, երբ գործնական առաջին քայլը հանձնախմբի աշխատանքների տապալման պատճառը դարձավ: Հատկանշական է, որ «հանձնաժողովը» չհամարձակվեց որեւէ նիստ գումարել Հայաստանում, քանզի հասարակական մերժողական կարծիքն առավել քան հստակ էր, եւ ցանկություն չկար այդ ժխտողականությունը առավել ցայտուն հրապարակ հանել: Ոչ-երի ձայնը լսվում էր ամեն կողմից, որոնցից ամենահատկանշականը, թերեւս, Հայաստանի քաղաքական երանգապնակի մեծամասնության միասնական հայտարարությունն էր, որն առավել էր մեկուսացրել այդ խմբակին:

էջ 2

Հաջորդ համարում

Հողը տեր ունի

Այսօր ազատագրված տարածքները ոչ միայն անվտանգության գոտիներ են, այլեւ հայկական բնակավայր, որտեղ հանգրվանել են բազում հայ ընտանիքներ՝ իբրեւ իրենց ընտանիքի մի հատված: Նման ծաղկուն շեն է դարձել Դիցմայրի գյուղը:

Քաղաքական 3

Պատմությունը կեղծ կատեգորիա չէ եթե այն չընկնի ՀՀՇ-ի ձեռքը

Սեփական քաղաքական նպատակների իրականացման խոտոր ճանապարհին ոմանք չեն խորշում անգամ քարոզարշավի միջոց դարձնել պատմության կեղծումը, որը հավասարվում է թուրքերի կողմից Ցեղասպանության փաստի ուրացմանը կամ հայերին այդ ոճրագործության մեջ մեղադրելուն:

Խորհրդարան 4

Կանայք աթոռներ են պահանջում

Առաջիկա խորհրդարանը կարող է կանանց առավել ներկայացուցչական կազմ ունենալ: Նոր պատգամավորական աթոռներ եւ քաղաքական կյանքում առավել լայն ներկայություն են պահանջում հայ կանայք:

Տնտեսություն 7

Արտաքին պարտքի վտանգները

Ապրիլին Վաշինգտոնում կայացած Արժույթի միջազգային հիմնադրամի ֆինանսների կոմիտեի նիստը հաստատեց ԱՊՀ յոթ երկրների պարտքի կրճատման ծրագիրը: Հայաստանը այդ ցանկում է: Սակայն առայժմ նա այդ հնարավորությունից զուրկ է լինելու:

Ընկերային 8

Ձեւավորվող աշխատանքի շուկա

Հայաստանում նորանոր աշխատատեղերի ստեղծմանը զուգընթաց աշխատանքի շուկան այդպես էլ վերջնականապես ձեւավորված չէ: Զբաղվածության կենտրոններում շարունակում են հազարավոր մարդիկ գրանցված մնալ, իսկ գործատուները դեռեւս պահանջվող աշխատողներին փորձում են գտնել միայն ծանոթ-բարեկամների շրջանակում:

Իրավական 9

Հասունանում է Ջհանգիրյանի պաշտոնանկությունը

Առաջիկայում բացառված չէ զինդատախազության մի քանի քննիչներին մեղադրանքի առաջադրումը, ինչին զուգահեռ անխուսափելի է նաեւ զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանի պաշտոնանկությունը: Քանզի, եթե անգամ ընդունենք, որ Ջհանգիրյանը տեղյակ չի եղել իր ենթակաների անօրինական գործողություններին, ապա պարտավոր էր դրանք բացառել ի սկզբանե:

Գիտություն 10

Փորձում են վերակենդանացնել

Տասնամյակներ շարունակ հայկական տնտեսության շարքային մասնագիտական շերտը կրթող պրոֆտեխուսումնարանները



վերջին շրջանում ճահճացած ու մոռացված դրության մեջ էին: Ներկայումս փորձ է արվում վերակենդանացնել այդ ոլորտը:

ملحق أزتاك

ԽՈՍՔ

Արդար երկրի ազատ քաղաքացի

Մայիսի 1-ին կրկին նշվելու է աշխատավորության օրը: Այդ տոնը ամեն մեկը փորձելու է արծարծել յուրովի՝ սկսած հանրահավաքներից, վերջացրած հերթապահ խոսքերի շռայլումով: Այս ամենով հանդերձ իր հոգսի, իր դժվարությունների ու չլուծված խնդիրների հետ է մնում աշխատավոր մարդը:

Մայիսյան այդ օրը ծնվել է իբրեւ աշխատավորության իրավունքների պաշտպանության օր՝ իր ժամանակին հատուկ դրսեւորումներով, երբ աշխատանքը առավել էր շահագործվում եւ աշխատավորը առավել հարստահարվում, աշխատավորի իրավունքները շատ ավելի էին անտեսված ու ոտնահարված: Դրա դեմ տասնամյակներ տեւող պայքարը տվեց իր անգնահատելի արդյունքը, բայց ոչ բոլոր հարցերը լուծվեցին:

Մեր ժամանակներում աշխատավորության իրավունքների, վիճակի հարցը առավել արդիական ու ցավոտ է հատկապես անցման շրջանի երկրներում, ի շարս որոնց Հայաստանում:

Այսօր աջ ու ահյակ մենք խոսում ենք նոր աշխատատեղերի ստեղծման, մարդկանց զբաղվածության խնդիրների լուծման մասին, սակայն անտեսվում է այն հանգամանքը, թե ինչպես են նրանք հայթայթում իրենց ապրուստը, ինչ վերաբերմունք ու գնահատանք կա նրանց աշխատանքի հանդեպ:

Մոռանում ենք, որ հազարավոր մարդիկ զրկված են իրենց տարրական իրավունքից, որ գործատուն ամեն պահի կարող է նրանց զրկել աշխատանքից, չվճարել աշխատավարձը կամ վճարել նվազագույն չափով՝ անտեսելով ամեն նորմ: Եվ այս առումով շատ հաճախ մասնավոր գործատուն ու պետությունը չեն տարբերվում իրարից:

Մայիսի 1-ին բազում խոսքեր շռայլելով աշխատավորներին անտեսվելու, մոռացվելու են այն հարյուր միլիոնավոր դրամների աշխատավարձերը, որ պիտի վճարվեին ուսուցիչներին, բժիշկներին, գիտնականներին, տասնյակ ձեռնարկությունների բանվորներին: Մոռացվելու են այն հազարավորները, ովքեր ամիսներ շարունակ օրնիբուն աշխատելով խաբվել են ու չեն վճարվել նորօրյա մեծահարուստների դղյակների, հյուրանոցների վրա կատարված աշխատանքի դիմաց: Եվ նրանք այլեւս հույսները կոտրել են թե իշխանությունից, թե արդարությունից, թե իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից: Հույսները կորցրել են, որովհետեւ իշխանությունները, շատ հաճախ իրենց պարտականությունը չկատարելով, դարակներում մոռացել են ՀՀ Սահմանադրության հիմնարար դրույթներից մեկը՝ Հայաստանը սոցիալական պետություն է: Մոռացել են գործատուի եւ աշխատավորի միջեւ հարաբերությունների կարգավորման եւ վերահսկման իրենց պարտականությունները, եւ մտածելով լոկ գործարարի, դրամատիրոջ մասին, դադարում են երկրի ամբողջ հասարակության իշխանությունը լինելուց:

Հայ մարդը, աշխատավորը սիրելով իր հայրենիքը կհավատա պետությանը, իշխանությանը, երբ զգա նրա արդար լինելը, իր հանդեպ հոգատարությունը, պետության կողմից պաշտպանված լինելու զգացողությունն ունենա: Միայն այդ դեպքում մենք կունենանք երկիրը պահող, շենացնող, որդուն ուրախությամբ բանակ ճանապարհող քաղաքացի, արդար երկրի ազատ քաղաքացի:

«Հաշտարարների» դավադրությունը

Տարոն Մխիթարյան

էջ 1

Սա թերեւս կարելի էր հասմարել պատմության մի մոռացված, իր նպատակին չհասած ու գերեզման իջեցված դրվագ, եթե վերջին շաբաթներին կրկին գլուխ չբարձրացնեին «հանձնախմբի» դերակատարները:

Այս անգամ արդեն փորձ է արվում հող գտնել Հայաստանում, հետագա գործունեությունը շարունակելու համար գտնել նոր անդամներ ու աջակիցներ: Նախ՝ Անդրանիկ Մինասյանի ու Վան Գրիգորյանի, հետո արդեն՝ «հանձնախմբի» ճարտարապետ, ԱՄՆ պետքարտուղարության փորձագետ Դեյվիդ Ֆիլիպսի այցերը ունեին հստակ նպատակ՝ փորձել հասմոզել քաղաքական, կուսակցական, հասարակական շրջանակներին՝ եթե ոչ միանալ, ապա առնվազն չեզոք մնալ հանձնախմբի վերակենդանացման ժամանակ:

Արմենպրես

Իհարկե, այս հանդիպումների ընթացքում փորձեր արվել են նոր անդամների ընդգրկման ուղղությամբ, ու նշմարվում են նաեւ որոշ անձինք, ովքեր այնքան էլ դեմ չեն նման «առաքելություն» ստանձնելուն: Սակայն հին ու նոր «առաքյալները» մոռանում են մի պարզ ճշմարտություն. ցանկացած անձ, շրջանակ, որ կմիանա այս վտանգավոր ու արհեստական նախաձեռնությանը, կմերժվի հասարակության կողմից, քանզի նման ձեւը եւ նպատակները մերժվել են ժողովրդի, հասարակության կողմից եւ չեն կարող կյանք ունենալ մեր երկրում ու Սփյուռքում: Ու խնդիրն այն չէ, թե ովքեր են ընդգրկված այդ հանձնախմբում, այլ դրա նպատակները եւ ծրագրերը:

«Հաշտություն» բառն իսկ անտեղի ու անհասկանալի է այս դեպքում, քանի որ երկու ժողովուրդների միջեւ թշնամության մասին չէ խոսքը, եւ կարիք չկա նրանց հաշտեցնելու: Պարզապես 1915 թվականին հայությունը ցեղասպանության է ենթարկվել թուրքական իշխանության կողմից, կորցրել է իր հայրենիքի մեծագույն մասը, իսկ վերապրողները գրկվել են իրենց երկրում համախումբ ապրելու, զարգանալու եւ իրենց ազգային արմատները պահպանելու պարզ մարդկային իրավունքից: Այսօր Հայաստանի Հանրապետությունը չէ, որ թշնամություն է անում Թուրքիայի հետ, այլ վերջինս է իր գործողություններով՝ շրջափակումով, նախապայմաններով վարվող խոսակցությամբ, հայկական փոքրամասնության նկատմամբ ճնշումներ գործադրելով, ռազմատենչ քաղաքականություն վարում Հայաստանի նկատմամբ:

Խնդիրը մարդկային, ազգային իրավունքի վերականգնումն է. միայն եւ միայն: Եվ քանի այս խնդիրը չի լուծված, թուրքական պետության կողմից իր նախորդների ոճրագործությունը չի դատապարտված, անիմաստ է խոսել կայուն տարածաշրջանի մասին: Նման «հաշտեցման հանձնախմբերը» չեն կարող հարցերին լուծում տալ: Վիետնամի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունների կայունացումը մի՞թե նման հանձնախմբով ձեւավորվեց, թե՞ պարզապես ամերիկյան զորքերի դուրսբերումով: Կամ անմարդկային չէ՞ր լինի, արդյոք, սեպտեմբերի 11-ից հետո Վաշինգտոնի եւ թալիբների միջեւ «հաշտեցման հանձնաժողովի» ձեւավորման որեւէ նախաձեռնություն:

Չոր, երկնային բանաձեւումներով շարժվողներն այսօր կրկին փորձում են արհեստական ձեւակերպումներով վերակենդանացնել նման մի նախաձեռնություն, ու հասել է պահը, որ մեր ժողովուրդը իր վճռական մերժումն արտահայտի այդ գործողության նկատմամբ: Եվ այդ քայլը առաջին հերթին պետք է սպասել Հայաստանի իշխանություններից, քանի որ իբրեւ համայն հայության հայրենիք՝ Հայաստանն է, որ պատասխանատու է մեր ողջ ժողովրդի քաղաքական ու ազգային իրավունքների համար:



Բացվեց հերոսի հուշահամալիրը

Ապրիլի 21-ին Արագածոտնի մարզի Արեգ գյուղում տեղի ունեցավ ազգային հերոս Թաքուլ Կրպեյանի հիշատակին նվիրված հուշակոթողի բացման արարողությունը: Մարզպետարանի եւ տեղի համայնքի ուժերով կազմակերպված միջոցառմանը ներկա էին ՀՀ կառավարության, մարզային եւ տեղական իշխանության, Հայ Յեղափոխական Դաշնակցության ներկայացուցիչներ, ինչպես եւ հերոսի զինակից ընկերները տարբեր շրջաններից:

Արարողությունն սկսեցին ՀՀ վարչապետն ու հերոսի դուստր Ասպրամը բացելով Թաքուլ Կրպեյանի շիրմին կանգնեցված հուշակոթողը:

Թաքուլին, նրա կողքին հանգչող ազատամարտիկներ Արթուրին ու Սամվելին, ինչպես եւ Արցախյան ազատամարտին ու նրա բոլոր հերոսներին նվիրված խոսքով հանդես եկան ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետյանը, ՊՆ փոխնախարար Արթուր Աղաբեկյանը, ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ Արտաշես Շահբազյանը, Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոս Արտավազդ Դարբինյանը, նահատակված ազատամարտիկների ծնողները:

Միջոցառմանը գեղարվեստական կատարումներով ոգեղեն-զգացմունքային լիցք հաղորդեցին գյուղի աշակերտները, նաեւ մայրաքաղաքից հրավիրված երգիչ-երգչուհիները: Հուշահամալիրի մոտ հավաքված մարդկանց հոծ բազմությունը վկան ու մասնակիցը դարձավ երախտիքի տուրքի եւ ոգեկոչումի: Հայրենիքի ազատության համար պայքարի, ինքնազոհաբերումի կամքը որպես ծեռք բերված հաղթանակի առհավատչյա, կարծես՝ օրվա խորհուրդն էր մարմնավորում եւ թեւածում էր ներկաների մտքերում ու հոգիներում:

Պատմությունը կեղծ կատեգորիա չէ, եթե չընկնի ՀՀՇ-ի ձեռքը

Ոճրագործության ուրացումն, անպարակուս, ավելի լկտի, ապոր ու դաժան իրողություն է, քան գործած ոճրագործությունն ինքնին: Քանզի ուրացումը, որպես հանցանք, միտված է անցյալի ոճիրը միշտ ներկայի մեջ պահելուն, քանզի ապանդի ուրացումը նման է ապանվածների շիրիմները պղծելուն: Սակայն առավել քան մեղմելի է հանցագործության բովանդակության խեղաթյուրումը, պատմության կեղծումը: Եվ հարյուրապատիկ ցավալի է տեսնել, երբ Հայոց մեծ ողբերգության կեղծարարությամբ զբաղվում է ոչ միայն թուրքը, այլեւ հայը:

Արտակ ԱՐԱՄՅԱՆ

Թուրքերն այս օրերին իրենց լրատվամիջոցներով ուզում են աշխարհին մաքուր ձեռքերով երեւալ, իսկ նրանց ձեռքի արյունը լվանում են հհշականներն ու նրանց լրատվամիջոցները, ավելին՝ մեղքը բարդում են հայերի վրա:

Եվ բնավ կապ չունի, թե «մեղավոր» հայերն ինչ կուսակցական պատկանելություն ունեն, ինչ գաղափարներ են դավանում. խնդիր կա վարկաբեկել հայերին կամ գոնե հավասարության նշան դնել նրանց եւ թուրքերի միջեւ:

Վերջին տարիներին մեզանում տեղի ունեցողի խորապատկերի վրա կարծես թե այլեւս ոչնչից չպետք է զարմանայինք: Այնուհանդերձ զարմանալի է, երբ հհշական գաղափարներ քարոզող թերթը ապրիլի 24-ի իր համարում Ցեղասպանության վերաբերյալ ոչինչ չգտավ հրապարակելու, քան Եղեռնի պլստմությունը խեղաթյուրող մի հոդված: Ազգային արժեքների ու գաղափարների հանդեպ իր ատելությունը դրսեւորելու առիթ դարձնելով ապրիլի 24-ը՝ իրեն պատմաբան համարող հոդվածագիրը հասել է այն աստիճանի, որ Թուրքիայի հետ միասին Եղեռնի մեղավոր է տեսնում... ՀՅ Դաշնակցությանը: Իսկ ՀՅԴ-ի «մեղքն» էլ այն է, որ պատմության ու ճակատագրի բերումով լինելով միակ կազմակերպված ուժը հայության մեջ՝ հանդգնել է պայքարել թուրքերի դեմ՝ դրանով իսկ հարուցելով թուրքերի «արդարացի զայրույթը»:

Սույն թեզն, անշուշտ, որեւէ նորություն չունի իր մեջ: Թուրքիայի պետական ու գիտական շրջանակները տասնամյակներ շարունակ նույն տեսակետն են առաջ տարել, թե, իբր, անշնորհակալ հայերը զենք են բարձրացրել ու թուրքերին ստիպել տեղահանել նրանց: Դե, տեղահանության ընթացքում էլ որոշ հայեր մահացել են: Այսինքն թուրքերի կարծիքով, հայերի զանգվածային ոչնչացման մեղավորը հայերն են: Տարօրինակ ոչինչ չկա, երբ Հայաստանի նախորդ իշխանության առաջնորդներն էլ, թուրքերից վերցնելով պատմությունը կեղծելու էստաֆետը, մեղավոր հայերի մեջ «գտան» ամենամեղավորին՝ Դաշնակցությանը: Իսկ ինչո՞ւ ոչ, չէ՞ որ նրանց համար պատմությունը կեղծ գիտություն է, ազգայինն էլ՝ կեղծ կատեգորիա: Սրանից հետո արդյո՞ք պետք է զարմանալ, որ նախկին նախագահը 1995թվականին Ցեղասպանության մեջ մեղադրեց ՀՅԴ-ին: Արդյո՞ք պետք է զարմանալ, որ հենց նույն քաղաքական ուժի ներկայացուցիչներն են տխրահռչակ «Թուրք-հայկական հաշտեցման հանձնախմբի» ակտիվիստները, պատահակա՞ն է, որ այդ «հաշտարարների» գործունեության գովերգությամբ հենց այն լրատվամիջոցն է զբաղվում, որն իր ապրիլի 24-ի համարում էջեր է տրամադրում Ցեղասպանության իրողության խեղաթյուրմանը:

Տեսնո՞ւմ եք, թե պատմությունը խեղաթյուրելու հարցում որչափ համաքայլ են թուրք պատմաբաններն ու հհշական հոդվածագիրը, Թուրքիայի բոլոր ժամանակների քաղաքական ղեկավարությունը եւ մեզանում բարեբախտաբար արդեն նախորդ իշխող քաղաքական ուժը: Թուրքերն ասում են՝ Ցեղասպանություն չի եղել, հհշականներն ասում են՝ եղած-չեղածի մեջ հայերը (դաշնակցականներն) են մեղավոր: Թուրքերն ասում են՝ ինչ եղել է՝ մոռացեք, եկեք հաշտվենք, իսկ հհշականներն ասում են՝ հաշտվենք, բայց հաշտվելուն խանգարում են հայերը (դաշնակցականները): Թուրքերն այս օրերին իրենց լրատվամիջոցներով ուզում են աշխարհին մաքուր ձեռքերով երեւալ, իսկ նրանց ձեռքի արյունը լվանում են հհշականներն ու նրանց լրատվամիջոցները, ավելին՝ մեղքը բարդում են հայերի վրա:

Եվ բնավ կապ չունի, թե «մեղավոր» հայերն ինչ կուսակցական պատկանելություն ունեն, ինչ գաղափարներ են դավանում. խնդիր կա վարկաբեկել հայերին կամ գոնե հավասարության նշան դնել նրանց եւ թուրքերի միջեւ:

Սա հետեւողական քաղաքականություն է, եւ, բնականաբար, չի սահմանափակվելու միայն եղածով: Վարկաբեկելով պետության, անկախության ու ազգայինի գաղափարները՝ սույն ուժերն այսօր ուզում են վարկաբեկել ճշմարտությունը: Պատահական չէ, որ ակտիվ քաղաքականություն վերադառնալու հհշական միտումը «համընկավ» արհեստածին «հաշտարար» խմբերի վերակենդանացման փորձերին ու ազգային արժեքներ դավանողների դեմ նոր քարոզարշավի սանձազերծմանը:



»Ա1+«-ի պահանջը մերժված է

2002 թվականի ապրիլի 2-ին հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կայացրած թիվ 37 որոշումից հետո էլ «Ա1+»-ի շուրջ ստեղծված աղմուկը հանձնաժողովի նիստերի դահլիճից տեղափոխվեց վճռաբեկ դատարանի նիստերի դահլիճ, ուր ապրիլի 19-ին մեկնարկեց ՀՀ քննչական դատարան ներկայացրած «Մելտեքս» ՍՊԸ-ի հայցը, որով պահանջվում էր անվավեր համարել ՀՌ ազգային հանձնաժողովի մի շարք որոշումներ, ըստ որոնց ապօրինի կերպով անջատվել է «Ա1+»-ի հաղորդակը:

«Մելտեքսի» ներկայացուցիչները պատասխանող կողմից պահանջում էին բացատրություններ տալ, թե ի՞նչ չափանիշներով է առաջնորդվել հանձնաժողովը միավորներ նշանակելիս, երբ մրցույթին ներկայացված ծրագրերում ապահոված չեն եղել օրենքի 49-րդ հոդվածով պահանջվելիք պայմանները, կամ դրանք խեղաթյուրվել են ըստ հարմարության: Ինչ վերաբերում է ապրիլի 3-ին Հայաստանի հեռուստատեսային ցանց ՓԲԸ-ի կողմից հաղորդակը անջատելուն, ըստ «Ա1+»-ի փաստաբան Լեւոն Բաղդասարյանի, նշված ընկերությունը իր այդ քայլով, անտեսելով տվյալ ընկերության եւ «Ա1+»-ի միջեւ կնքված պայմանագիրը, օրենսդրական խախտում է կատարել. ըստ օրենքի ոչ մի պետական կառույց իրավասու չէ ներխուժել այլ տնտեսական դաշտ եւ խոչընդոտել նրա աշխատանքներին:

Ի պատասխան բերված փաստարկների, ՀՌ ազգային հանձնաժողովի ներկայացուցիչ, փաստաբան Սուրեն Պետրոսյանը, յուրովի մեկնաբանելով օրենքի սույն դրույթները, նշեց, որ հանձնաժողովը առաջնորդվել է բացառապես օրենքի դրույթներով:

Իրավաբանական երկարատեւ վիճաբանությունների ավարտին, ապրիլի 25-ին դատավոր Նախշուն Տավարացյանը, մերժելով «Մելտեքս» ՍՊԸ-ի պահանջը, չափազանց փոքրացրեց «Ա1+»-ի այն հույսերը, որոնք հնարավորություն կընձեռեին հեռուստադիտողին եթերում կրկին տեսնել այս հեռուստաընկերության ծրագրերը: Բայց փոքր հույս դեռ կա: Վճիռը տասնհինգ օրվա ընթացքում կարող է բողոքարկվել:

Կ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

ՍԵՄԻՆԱՐ

ՀՅԴ ներկայացուցիչները Թեհրանի սեմինարում

Ապրիլի 23-ին Թեհրանում Իրանի նախագահի գրասենյակին առընթեր ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնը նախաձեռնել էր տարածաշրջանային խնդիրներին, Հայաստան-Իրան հարաբերություններին նվիրված սեմինար ՀՅԴ ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նախագահում էր Իրանի նախագահի քաղաքական հարցերով խորհրդականը: ՀՅԴ Բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը հանդես եկավ տարածաշրջանի նոր իրադրության ու հավանական զարգացումների լույսի ներքո Հայաստանի ներքաղաքական իրավիճակին, արտաքին քաղաքականության եւ ազգային անվտանգության հիմնահարցերին նվիրված զեկույցով:

ՀՅԴ Բյուրոյի անդամ Ալբերտ Աճեմյանը անդրադարձավ հայ-իրանական քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունների ներկա վիճակին, այդ կապերի կայացման ու ամրապնդման ուղղությամբ ՀՅԴ մոտեցումներին:

ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի անդամ Հանրի Փափազյանը ներկայացրեց Եվրոպայում Հայ Դատի հետապնդման ուղղությամբ տարվող աշխատանքները: Մանրամասն ներկայացվեցին Եվրոպայում Հայ Դատի նորաստեղծ գրասենյակի ծրագրերն ու գործունեությունը:

ՀՅԴ ռազմավարական ուսումնասիրության Լիբանանի գրասենյակի տնօրեն Վարանդ Փափազյանի զեկույցը նվիրված էր տարածաշրջանային երկրների փոխհարաբերություններին, տնտեսական-քաղաքական զարգացումների վրա միջազգային ներկա իրադարձությունների ու ուժերի վերադասավորման ազդեցությանը:

Սեմինարում ընթացավ ակտիվ քննարկում:

ՀՅԴ փորձագետների մասնակցությամբ նման սեմինարն առաջինը չէր: Ինչպես մեզ հետ զրույցում նշեց ՀՅԴ Բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը, նման միջոցառում կազմակերպվել էր նախապես Մոսկվայում: «Մենք քաղաքական գործիչների ու շրջանակների հետ խոսակցություններին զուգահեռ, շատ ենք կարեւորում նման փորձագիտական կենտրոնների եւ մասնագետների հետ քննարկումները»:

Հետաքրքիր էր, որ ՀՅԴ փորձագետների թվում էին Ֆրանսիայից Հանրի Փափազյանը եւ Լիբանանից Վարանդ Փափազյանը: «ՀՅԴ գործունեությունը մաս է կազմում հայության եւ հայոց պետականության Հայ Դատի ուղղությամբ աշխատանքներին: Եվ միջազգային հանրությունը, իբրեւ հայության ընդհանուր տեսակետ, պետք է լսի նաեւ Սփյուռքի փորձագետների տեսակետը»,- նշեց Վահան Հովհաննիսյանը:

Կուսակցությունները դարձյալ մերժում են

Մեր երկրի արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն է. քաղաքական կարեւորագույն մի ուղղություն, որը բացառվում էր նախորդ իշխանությունների օրոք: Այսօր նույն այդ ուժերը շարունակում են իրենց ժխտողական գիծը:

ԲԵԼԼԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Այս ամենը փորձ է արվում օգտագործել որպես որոշիչ խաղաքարտ հետագա քայլերի համար միակ եւ առանցքային գործոն դարձնելով այսօր արդեն ձախողված «Թուրքհայկական հաշտեցման հանձնաժողովը»: Վերջինս իր ստվերային գործունեության ակտիվ շրջանում ընդգրկեց նաեւ հասարակության կողմից մերժված քաղաքական որոշ գործիչների, ինչն էլ առավել արտահայտիչ դարձրեց հանձնաժողովի բուն նպատակը՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ձախողումը: Ընդամենը մի քանի ամսվա գործունեությունից հետո հանձնաժողովը ձախողվեց, որովհետեւ քաղաքական ուժերը այս հարցում չապակողմնորոշվեցին, ավելին՝ ընդունվեց համատեղ հայտարարություն, որի տակ ստորագրեցին ՀՀ Ազգային ժողովի ԱԺՄ, ՀԿԿ, ՀՀԿ, ՀՅԴ, ՍԻՄ, ՕԵ խմբակցությունները, «Ժողովրդական պատգամավոր» եւ «Ագրոարդյունաբերական ժողովրդական միավորում» խմբերը: Նրանք միանշանակորեն մերժեցին հանձնաժողովի գոյությունը, քանի որ հաշտեցման հարցի արծարծման ստվերային գործընթացը վտանգում է իրական կարգավորումը. «Բնականոն հարաբերությունների հաստատմանը չեն կարող նպաստել պատմական ճշմարտությունը թաքցնելու փորձերը, արհեստական հաշտեցման ձեռնարկումները, այդօրինակ գործողությունները Հայոց ցեղասպանության փաստը օրակարգից դուրս մղելու, Արցախյան բանակցություններում Թուրքիայի գործուն ներկայությունն ապահովելու անուղղակի նպատակ են հետապնդում: Անընդունելի է Հայոց ցեղասպանության ճանաչման քաղաքական աշխատանքը նսեմացնելու, այդ պայքարի հայկական միասնական ճակատը պառակտելու եւ միջազգային ատյաններում վերելք ապրող գործընթացը կասեցնելու ցանկացած փորձ»,- ասվում է հայտարարություն մեջ:

Այսօր կրկին փորձեր են արվում վերակենդանացնելու հանձնաժողովը եւ առավել ընդլայնելու նաեւ շրջանակները: Մինչդեռ քաղաքական ուժերը անգիջում են իրենց մոտեցումներում վերահաստատելով ընդդեմ այսօրինակ հանձնաժողովի գոյության՝ կես տարի առաջ հայտնած դիրքորոշումները: **«Հանձնաժողովը շարունակում էր ընդհատակյա գործել. իսկ այսօր նորից ջրի երես դուրս գալու հավակնություններ է դրսեւորում: Առհասարակ, հանձնաժողովի գոյությունը վիրավորական է մեզ համար, որովհետեւ խոչընդոտում է Հայոց ցեղասպանության ճանաչմանը»**,- ասաց «Ագրոարդյունաբերական ժողովրդական միավորում» պատգամավորական խմբի ղեկավար Հմայակ Հովհաննիսյանը: Իսկ Հայկամկուսի արձագանքը առավել քան կտրուկ էր: **«Ոչ մի հայ-թուրքական հաշտեցում այն բարոյական արժեքը չունի եւ չի էլ կարող ունենալ, ինչպիսին Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն է, քանի որ սա ոչ միայն մեր ժողովրդի, այլեւ ողջ աշխարհի խնդիրն է: Կոմկուսը դատապարտում է Ցեղասպանության ճանաչմանը խոչընդոտող ցանկացած քայլ»**,- շեշտեց ՀԿԿ խմբակցության անդամ Դագիկ Թադեւոսյանը:

ՍԻՄ-ի նախագահ Հրանտ Խաչատրյանն էլ գտնում է, որ հանձնաժողովը իրականում գոյություն չունի «հանձնաժողովի հարցը լուծվեց այնպես, ինչպես եւ անհրաժեշտ էր, այսինքն՝ այն այլեւս գոյություն չունի. մենք անփոփոխ ենք մեր տեսակետում»:

Խորհրդարանական մեծամասնության կարծիքով էլ այսօրինակ հանձնաժողովները, բացի վնասից որեւէ այլ բան տալ չեն կարող: **«Նման համապետական հարցում, ինչպիսին Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն է, ինքնագործունեությունը միմիայն բացասական հետեւանք կարող է ունենալ»**,- հայտարարեց Գ. Սահակյանը: **«Հայ-թուրքական երկխոսություն ընդհանրապես պետք է, բայց դա պետք է արվի պետական եւ ոչ թե այդպիսի հանձնաժողովների, անհատ մարդկանց մակարդակով»**,- ավելացրեց «Օրինաց երկիր»-ի նախագահ Արթուր Բաղդասարյանը:

Հայտարարությանը միանալու իրենց դիրքորոշումները վերահաստատեցին նաեւ ԱԺՄ-ն ու «Ժողովրդական պատգամավոր» խումբը: **«Հայտարարության հետ կապված խումբը մնում է իր տեսակետին, քանի որ դա մեր քաղաքական վարքագիծն է, եւ, ի վերջո սիրուն աչքերի համար չենք ստորագրել»**,- ասաց Կարեն Կարապետյանը: Իսկ Վազգեն Մանուկյանը շեշտեց. **«Հանձնաժողովը պետք էր այլ կերպ կազմել. ես իմ սկզբունքների մասին բազմիցս ասել եմ գործը պետք է ճիշտ իրականացնել»**:

Թեեւ քաղաքական ուժերը այս հարցում միասնական են ընդդեմ մերկացված հանձնաժողովի, սակայն իրենց մի քանի ամիսների գործունեությամբ իսկ հանձնաժողովի հայ անդամները նպաստեցին, որ Թուրքիան ամրապնդի իր քաղաքական վարքագիծը, ըստ որի երկու պետությունների միջեւ հարաբերությունները կարող են զարգանալ մի նախապայմանով՝ որ անտեսվի Հայոց ցեղասպանության հարցը:

ԼՍՈՒՄՆԵՐ

Կանայք աթոռ են պահանջում

Հայաստանում կանայք ակտիվորեն չեն ընդգրկված քաղաքական գործընթացներում եւ քիչ տեղեր են զբաղեցնում թե գործադիրում, թե օրենսդիրում: 900 գյուղական եւ քաղաքային համայնքներից ընդամենը երկուսն է կին ղեկավարում, 4500 ավագանու անդամներից 450-ն են կանայք:

Խնդիրն ավելի մտահոգիչ է (ըստ կանանց հասարակական 40 կազմակերպությունների) բարձր պաշտոնների պարագայում: ՀՀ կառավարությունում չկա կին նախարար, փոխնախարարի պաշտոն են զբաղեցնում ընդամենը 4-ը: Այս փաստերը թեեւ խոսում են գենդերային անհավասարության մասին, բայց իրավիճակը երբեմն բացատրվում է սոցիալ-տնտեսական պատճառներով ու ազգային ավանդույթներով:

ԱԺ-ում հրավիրված լսումների ընթացքում քննարկվեց «Կանանց քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1952 թ. Կոնվենցիան վավերացնելու հարցը: Մասնակցում էին կանանց հիմնահարցերով զբաղվող 40 կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք ստեղծված անհավասար պայմանները հաղթահարելու ելքը համարում են Կոնվենցիայի վավերացումը եւ սատարումը ՀՅԴ խմբակցության այն առաջարկին, ըստ որի ՀՀ ԱԺ-ում կանանց քվոտան պետք է 25% կազմի:

Այսպիսով, հայ կանայք իրենց պատրաստ են համարում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու, մինչդեռ հասարակական ակտիվ գործունեությունը քաղաքական ակտիվ ասպարեզ մուտք գործելու ընդամենը մի բաղադրիչն է:

Հասարակական ակտիվ գործունեության մեջ ընդգրկված կանայք նշանաբան են դարձրել հետեւյալ միտքը «Տղամարդը երջանիկ լինելու համար իր կողքին պետք է ունենա անհատ կին, ոչ թե ծորտ»: Կանաց հանրապետական խորհրդի ղեկավար Նորա Հակոբյանի հնչեցրած այս նախադասությունը միանգամայն հասկանալիորեն արժանացավ կանանց ծափերին:

1997 թ. ՀՀ կառավարությունը հաստատել է գենդերային քաղաքականության զարգացման ծրագիր, իսկ հետագայում էլ 1998-2000 թ.թ. միջոցառումների ազգային ծրագիրը: Կանանց հիմնահարցերի լուծմանը նպաստելու առաջնային խնդիրներից մեկը ՄԱԿ-ի 1952 թ. Կոնվենցիայի վավերացումն է, որի առանցքային դրույթներում հստակ նշված է. կանայք առանց որեւէ խտրականության կարող են քվեարկել բոլոր ընտրությունների ժամանակ, հավասար պայմաններում կարող են ընտրվել օրենքով հաստատված այն բոլոր հաստատություններում, որոնք պահանջում են հրապարակային ընտրություններ, եւ կանայք իրավունք ունեն զբաղեցնել հասարակական, պետական պաշտոններ: Կնոջ դերի բարձրացումը եւ ԱԺ-ում կանանց քվոտայի ավելացումը թեեւ մեզանում օրեցօր վերածվում է հասարակական պահանջի, սակայն այս ամենը զուտ հաճոյախոսություն որակեց խորհրդարանական լսումները վարող Վիկտոր Դալլաքյանը. «Ես չեմ ուզում, որ մենք կանանց զգացմունքների վրա խաղանք, թե 25% կամ 100% տեղ կտանք նրանց ընտրացուցակներում, որ կանայք էլ մտածեն ինչ լավ տղաներ են նման բաներ առաջարկողները: Այս հարցին պետք է մոտենալ ամենայն լրջությամբ»: Հետաքրքիր է, թե պետահրավական հարցերի հանձնաժողովի ղեկավարը խնդիրը ինչ տեսանկյունից է դիտարկում, երբ դեմ է արտահայտվում քվոտաների ավելացմանը, եւ ընդամենը մտադիր է «հարցին մոտենալ ամենայն լրջությամբ»: Չնայած վերոհիշյալ տեսակետին, օրենսդիրը նկատում է նաեւ. «Հայ կանանց 60%-ն այսօր ունի բուհական կրթություն, եւ այս պոտենցիալը քաղաքական ու տնտեսական կյանքում օգտագործելու անհրաժեշտություն կա»:

«ՀՅԴ-ն որդեգրելու է 25%-ի սկզբունքը»

Խորհրդարանական լսումներում առանձնահատուկ ուշադրության նյութ դարձավ համամասնական ցուցակում կանանց 25% քվոտայի կիրառման առաջարկը: Այս խնդրի շուրջ զրուցեցինք ՀՅԴ խմբակցության ղեկավար ԱՂՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ հետ:

- ***Քաղաքական ասպարեզ մուտք գործելու համար արդյո՞ք մեր ազգային ավանդույթները խոչընդոտ չեն հանդիսանում հայ կնոջ համար:***

- Խոսքը ոչ այնքան քաղաքական ասպարեզի մասին է, որքան այն մասին, որ պետության մեջ կառավարությունում, ԱԺ-ում, կանայք պետք է իրենց ծանրակշիռ ներկայությունն ունենան եւ մասնակից լինեն որոշումների կայացմանը. դրանում ես խորապես համոզված եմ: Իհարկե, որոշակի մտածողությունների, ավանդույթների առումով դեռ կաղապարներ կան: Ավանդաբար հայ կինը եղել է ընտանիքի սյունը, հիմքը, եւ որքան կարեւոր է կնոջ ներկայությունը այդ ասպարեզում, նույնքան անհրաժեշտ է կառավարման համակարգում: Բայց սրան պետք է գնանք աստիճանաբար, քանի որ միանգամից չի լինի: Մենք այն հասարակությունների նման չենք, որտեղ կինը ամբողջովին պետք է մեկուսացված լինի հասարակական, քաղաքական կյանքից:

- ***ՀՅԴ-ն առաջարկում է, որ բոլոր կուսակցություններն իրենց ընտրացուցակների 25%-ը հատկացնեն կանանց, բայց մենք այսօր ունե՞նք անհրաժեշտ պոտենցիալը:***

- Վստահաբար կարող եմ ասել, որ հայ կինը ունի այդ պոտենցիալը. ցուցանիշները բարձր են եւ հասարակական ակտիվության, եւ կրթամակարդակի առումով: Ամբողջ խնդիրը քաղաքական կամք դրսեւորելն է. առաջին հերթին կուսակցությունները այս մտածելակերպը հաղթահարելու ռեալ հիմքեր պետք է ստեղծեն: Շատ երկրներում այդ քվոտաները գործում են: Սա ուղղակի ազդակ է խթանելու համար կնոջ մասնակցությունը պետական կարեւորագույն որոշումներին: Մեր խմբակցությունը պնդելու է, որ 25% քվոտան օրենքի ուժ ստանա, այսինքն գործի բոլոր կուսակցությունների պարագայում: Բայց եթե դա չհաջողվի, ապա մենք մեր որոշմամբ ՀՅԴ-ի համար կպահպանենք այդ համամասնությունը:

- ***Կնոջ եւ տղամարդու իրավահավասարությունը Հայաստանում այսօր ի՞նչ մակարդակի վրա է:***

- Հայաստանում կնոջ եւ տղամարդու միջեւ երբեք խտրականություն չի եղել: Այլ հարց է, որ կինը երբեմն ինքն է իրեն սահմանափակում ընտանեկան ու անձնական հարցերով: Եթե կանայք միայն իրենք իրենց ձայն տան, այսպիսի խնդիր չի լինի: Այսօր մեր բնակչության 55%-ը կանայք են, բայց ԱԺ-ում ունենք ընդամենը 4 կին պատգամավոր: Բայց սա ոչ թե իրավահավասարության խախտման, այլ հասարակական ակտիվության հարց է:

- ***Հայ կնոջը կառավարման ասպարեզ բերելը առավելապես հասարակակա՞ն, թե՞ քաղաքական պահանջ է:***

- Իհարկե, հասարակական որոշակի պահանջ կա: Դրա վկայությունը խորհրդարանական լսումներն էին: Բայց սա որակել որպես ամբողջովին հասունացած հասարակական պահանջ ճիշտ չի լինի: Կրկին նշեմ, որ անհրաժեշտ է քաղաքական կամք դրսեւորել: Մենք համոզված ենք, որ կանանց ներկայությունը դրական ազդեցություն կունենա բազմաթիվ ոլորտներում: Կանայք շատ հաճախ ավելի հավասարակշռված մոտեցումներ են ցուցաբերում: Կարծում եմ կանանց ներկայությունը կառավարությունում, խորհրդարանում կարող է մեղմել այնպիսի երեւույթներ, ինչպիսիք են կոռուպցիան, ստվերային տնտեսությունը:

Հիշում են ամենուր

ԼԻԲԱՆԱՆ

Ապրիլի 23-ին Բեյրութում լիբանանահայությունը երեք կուսակցությունների հրավերով համախմբվել էր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի բակում: Մատուռի մոտ ծաղկեպսակ տեղադրելուց հետո ելույթ ունեցան Ռամկավար ազատական, Հնչակյան կուսակցությունների, ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչները: ՀՅԴ ներկայացուցիչ Հովիկ Բերթիզլյանը շեշտեց իրավունքներին ամբողջապես վերատիրանալու համար տարվող վճռական պայքարի կարեւորությունը: Անդրադառնալով հայկական շարժման ջլատման փորձերին նա հայտարարեց. «Հայրենի մեր իշխանությունների, հայրենաբնակ մեր ժողովրդի եւ ամբողջ սփյուռքահայության պարտավորությունն է աչալուրջ լինել եւ ծախողել այդ դավը»: Հավաքի փակման խոսքը տրվեց Արամ Ա կաթողիկոսին: Հարգանքի խոսք ուղղելով Հայոց ցեղասպանության փաստը ճանաչած պետություններին կաթողիկոսն ասաց. «Հայ Դատը մեկ է, բոլորս Հայ Դատի զինվորն ենք եւ միշտ այդպես պետք է մնանք»:

Ապրիլի 24-ին արաբական աշխարհի մամուլի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը «Նահար» օրաթերթը, իր հերթական համարի հետ միաժամանակ ներկայացրել է նաեւ «Ազդակի» արաբատառ 45000 օրինակով հավելվածը, որն ամբողջությամբ նվիրված է Հայոց ցեղասպանության 87-ամյակին: Միաժամանակ համաձայնություն է կայացել նաեւ «Ինկոնետ» էլեկտրոնային կապի ընկերության հետ: Վերջինս ապրիլի 24-ին «Ազդակի» կողմից ամփոփ նամակ է հղել իր 42000 բաժանորդներին ընդգծելով օրվա խորհուրդը:

ՋԱՎԱԽՔ

Ապրիլի 23-ին երեկոյան ժամը 20-ին Ջավախքի երիտասարդական մշակութային միության նախաձեռնությամբ բազմաթիվ ջավախքցի երիտասարդներ ջահերով երթի էին դուրս եկել ի ոգեկոչում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի: Երթը սկսվեց Ախալքալաքի Սբ Խաչ եկեղեցու բակից եւ շարունակվեց մինչեւ քաղաքի հարեւանությամբ գտնվող Տավշանթափա լեռան գագաթը, որտեղ երթի մասնակիցները Ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման խարույկ վառեցին:

Նույն օրը Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառում տեղի ունեցավ նաեւ Նինոծմինդա քաղաքի երիտասարդական պալատում:

Ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հավերժացման արարողություն տեղի ունեցավ Ախալքալաքի Սբ Խաչ եկեղեցու բակում: Նախ եկեղեցու քահանա տեր Սամվելը անցկացրեց հոգեհանգստի արարողություն, որից հետո հավաքվածների առջեւ Ցեղասպանությունը դատապարտող եւ հայությանը միասնական պայքարի կոչող ճառերով հանդես եկան Ախալքալաքի շրջանային վարչության ներկայացուցիչները եւ մշակութային գործիչներ:

Նույն օրը Ախալքալաքի շրջանի Տուրցի գյուղում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարի բացում:

Ցեղասպանության զոհերին նվիրված միջոցառումներ տեղի ունեցան նաեւ Նինոծմինդա եւ Ախալցխա քաղաքներում, Ջավախքի բազմաթիվ գյուղերում:

ԲԵԼԱՌՈՒՍ

Ապրիլի 24-ին Մինսկում նշվեց Հայոց Մեծ եղեռնի 87-րդ տարեդարձը: Բելառուսում ՀՀ դեսպանը, Բելառուսի հասարակական մի շարք կազմակերպությունների, լրատվամիջոցների, հայ համայնքի, այս երկրում գործող այլ ազգերի համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչները ծաղիկներ դրեցին Ալեքսանդր Նեւսկու եկեղեցու բակում տեղադրված հայկական խաչքարին եւ մեկ րոպե լռությամբ հարգեցին Ցեղասպանության զոհերի հիշատակը:

ՀՈԼԱՆԴԻԱ

Հոլանդական Ասենի քաղաք վաղ առավոտից Հոլանդիայի տարբեր ծայրերից եկան հարյուրավոր հայորդիներ, որոնք, համախմբվելով, դանդաղ շարժվեցին դեպի քաղաքապետարան իրենց հետ տանելով բողոքի կարգախոսներ:

Ցույցն ավարտվեց քաղաքապետարանի առջեւ: Խաղաղ ցույցի ավարտից հետո հավաքված բազմությունը շարժվեց դեպի «Բոսկամպ» գերեզմանատուն, որտեղ տեղադրված է հայկական խաչքարը: Ներկա հոգեւորականները, սրբազան հայր Երկաթյանի ղեկավարությամբ, կատարեցին հոգեհանգստի սուրբ արարողություն, որից հետո գերեզմանատան սրահում տեղի ունեցավ հանդիսավոր ցերեկույթ Եղեռնի զոհերի ոգեկոչման կապակցությամբ: Հրավիրվածների մեջ էին Հոլանդիայի խորհրդարանի անդամ պրն վան Դեյկը, Բենելյուքսի երկրներում Հայաստանի Հանրապետության լիազոր դեսպան Վիգեն Չիթեջյանը եւ այլ պատվավոր հյուրեր: Տպավորիչ էր հատկապես պրն վան Դեյկի ելույթը, որը մեծ ոգեւորություն առաջացրեց ու ներկաներին հույս ներշնչեց, որ հետեւողական պայքարի դեպքում արդարության հաղթանակն անխուսափելի է: ՀՀ դեսպան Վ. Չիթեջյանը մատնանշեց Հայաստանի Հանրապետության դերի կարեւորությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում եւ գոհունակություն հայտնեց հոլանդահայության կատարած կազմակերպական մեծ աշխատանքի կապակցությամբ:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Ապրիլի 21-ին Աթենքի «Աթիքոն» հանդիսասրահում Հունաստանի մայրաքաղաքի նահանգապետարանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Մեծ եղեռնի 87-րդ տարելիցին նվիրված միջոցառում, որը կազմակերպել էին ՈԱԿ-ի Հայ իրավանց խորհուրդը եւ ՀՅԴ Հունաստանի Հայ Դատի հանձնախումը:

Ողջույնի խոսք ասաց Հունաստանի խորհրդարանի նախագահ պրն Ապոստոլոս Կակլամանիսը: Այնուհետեւ ելույթ ունեցան հունական կառավարության անունից մամլո նախարար եւ պաշտոնական խոսնակ Խրիստոս Պրոտոպապասը, օրվա բանախոս, համալսարանի դասախոս եւ «Նոր հանրապետություն» կուսակցության խորհրդարանական խոսնակ Պրոկոֆի Պավլոպուլոսը, հունական տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ ու պետական այրեր: Ձեռնարկին ներկա էին պատգամավորներ, օտար դեսպանատների ներկայացուցիչներ:

Ապրիլի 24-ին Աթենքի թուրքական դեսպանատան մոտ կազմակերպվեց բողոքի ցույց, որին ներկա էին Հունաստանի բոլոր կուսակցությունների երիտասարդական կազմակերպությունների ղեկավարները:

Ցույցի ընթացքում վեց երիտասարդական կազմակերպությունների կողմից ստորագրված ընդհանուր հուշագիրը փակցվեց թուրքական դեսպանատան դարպասներին: Հուշագրում թուրքական իշխանությունից պահանջվում էր Հայոց ցեղասպանության ճանաչումը եւ հայ ժողովրդի հատուցման իրավունքը:

ԱՎՍՏՐԱԼԻԱ

Սիդնեյում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 87-ամյակին նվիրված հանդիսություն, որի ընթացքում բանախոսեց Ռաֆֆի Հովհաննիսյանը: Ապրիլի 26-ին Նյու Սաուդ Վեյսի Հայոց ցեղասպանության հուշարձանին կդրվի ծաղկեպսակ: Դրան կհաջորդի Ռաֆֆի Հովհաննիսյանի ելույթը:

Մելբուռնում ապրիլի 27-ին եւ 28-ին տեղի կունենան միջոցառում եւ դասախոսություն, որոնց ընթացքում եւս ելույթ կունենա Ռ. Հովհաննիսյանը:



ԻՐԱՆ

Վանդույթի համաձայն, ապրիլի 24-ին թեհրանահայությունը դուրս էր եկել բողոքի ցույցի: Ազգային, կրոնական առաջնորդների ղեկավարությամբ, պահանջատիրական կարգախոսներով ու պաստառներով քայլեցին Իրանի մայրաքաղաքի փողոցներով ի հիշատակ 1915 թվականին Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության զոհերի:

Մինչ այդ, Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավոր Ժորժիկ Աբրահամյանը օրենսդիր մարմնի նիստի ժամանակ հանդես էր եկել Հայոց ցեղասպանության ճանաչման հայտարարությամբ, որին միացել են խորհրդարանի երեսուն պատգամավորներ:

ԱՄՆ

Լոս Անջելեսի թուրքական դեսպանատան առջեւ ապրիլի 24 ին տեղի ունեցավ ցույց, որը կազմակերպել էր ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Հայ երիտասարդաց Դաշնակցությունը: Ցույցի նպատակն էր դատապարտել մարդկության դեմ գործվող ոճիրները, միաժամանակ Թուրքիայի կառավարությունից պահանջել Հայոց ցեղասպանության ճանաչումը:

Գլենդեյլի քաղաքային խորհուրդը ապրիլի 24-ը հայտարարեց «Հայոց ցեղասպանության հիշատակումի օր»: Քաղաքապետ Ռաֆֆի Մանուկյանը քաղաքային խորհրդի նիստում այդ հայտարարությունը ներկայացրեց Գլենդեյլի ամերիկահայ գաղութի ներկայացուցիչներին:

Ապրիլի 21-26-ը «հիշատակումի շաբաթ»-ի շրջանակում Գլենդեյլում տեղի ունեցան Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք միջոցառումներ:

Ապրիլի 26-ին տեղի կունենա շաբաթվա ծեռնարկները եզրափակող հանդիսություն:

Կոնգրեսական էդեմ Շիֆը Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի առջեւ արտասանած ճառում ոգեկոչել է Ցեղասպանության 1,5 միլիոն զոհերի հիշատակը: Ինչպես անցյալ տարի, այս տարի նույնպես կոնգրեսականը հիշատակել է Ցեղասպանության զոհերի անունները, որոնք արձանագրվելու են Կոնգրեսի ամենօրյա տեղեկագրում: Շիֆի գրասենյակը Ցեղասպանության մասին հրապարակել է մի հաղորդագրություն, որով հայ ընտանիքներից խնդրում է իրեն փոխանցել Ցեղասպանության զոհերի անունները նրանց ծայնը այդ կերպ լսելի դարձնելու նպատակով:

Ապրիլի 21-ին Կոնեկտիկուտում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության 87-ամյակի ոգեկոչման արարողություն, որի բանախոսն էր Ժիրայր Պեռճեքյանը: Միջոցառումն սկսվել է Հայոց ցեղասպանության զոհերի հոգու համար մատուցված աղոթքով: Նա շեշտեց, որ անցած տարվա ընթացքում մի քանի երեւույթներ իրենց հետքն են թողել եւ շարունակելու են ազդել Հայոց ցեղասպանության ճանաչման ու Հայ Դատի հետապնդման աշխատանքների վրա: Դրանցից է սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը, որի հետեւանքով Միացյալ Նահանգներում վերացվեց 907 բանաձեւը, ինչի արդյունքում Ադրբեջանն սկսել է ամերիկյան ռազմական օժանդակություն ստանալ:

«Բազալտային» փակուղի

Սա է, թերեւս, դիպուկ բնորոշումը այն իրավիճակի, որում արդեն ոչ մեկ տարի շարունակում են մնալ «Բազալտ» ԲԲԸ տնօրինության եւ շարքային բաժնետերերի փոխհարաբերությունները: Ինչ խոսք, փակուղային վիճակները ներկա դրությամբ բնութագրական են Հայաստանի գրեթե բոլոր բաժնետիրական ընկերությունների եւ նրանց շուրջ 110 հազար շարքային բաժնետերերի համար: Սակայն «Բազալտի» պարագայում առկա է մի առանձնահատկություն: Չհաշտվելով ստեղծված իրավիճակին՝ ԲԲԸ-ի բաժնետերերը որոշել են հարցը արծարծել համապատասխան ատյանում:

Տիգրան ՍԻՄՈՆՅԱՆ

Վերջերս 70 ստորագրությամբ ամրագրված դիմում-բողոք է հղվել ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի նախագահ Էդուարդ Մուրադյանին:

Ասենք միանգամից, որ այս քայլով «Բազալտի» շարքային բաժնետերերը ակնկալում են իրավասու կառույցի միջնորդությունը, պարզելու համար՝ նախ, ինչո՞ւ մինչ օրս չի վճարվել «1995-1996 թթ. ընկերության գործունեության արդյունքում ստացված շահույթից որպես մանր բաժնետերերի շահութաբաժին նախատեսված 25 միլիոն դրամ գումարը»: Դիմում-բողոքում լուրջ անհանգստություն է հայտնվել նաեւ այն մասին, որ «անհայտ պատճառներով» ձեռնարկության տնօրինությունը տակավին հստակ պատասխան չի տվել 1997 թվականին «Բազալտի» գործունեության արդյունքում գոյացած շահույթի, մասնավորապես՝ բաշխման ենթակա մոտ 9 մլն դրամի «ճակատագրի» վերաբերյալ: Եվ, որ պակաս կարեւոր չէ, դիմումի հեղինակներին հետաքրքրում է, թե ինչո՞ւ «50 տոկոսով սեփականաշնորհման հետեւանքով մանր բաժնետերերին հետ տրվելիք վաուչերների մի մասը վերադարձվել է երկու տարի ուշացումով, իսկ մյուս մասը չի վերադարձվել մինչ օրս»:

Այսքանով իսկ հասկանալի է դառնում, որ «Բազալտ» ԲԲԸ-ի փոքր բաժնետերերի շահերի եւ իրավունքների վերականգնումը ՀՀ արժեթղթերի հանձնաժողովից կպահանջի ոչ քիչ ջանքեր: Խնդիրը սոսկ այն չէ, որ, իրենց իսկ խոսքերով, շարքային բաժնետերերը իսպառ զրկված են եղել ձեռնարկության խորհրդի գործունեության եւ նրա ընդունած որոշումների նպատակահարմարության մասին տեղեկատվություն եւ պարզաբանում ստանալու օրինական հնարավորությունից: «Երկիրի» խմբագրություն այցելած «Բազալտի» մի խումբ փոքր բաժնետերեր, օրինակ, անկեղծորեն ասացին, որ 1997-ից ի վեր, ձեռնարկության մոտ 1200 փոքր բաժնետերերից գրեթե ոչ ոք հստակ պատկերացում չի ունեցել, թե ով է տնօրինում 64 տոկոսանոց «վերահսկիչ փաթեթը»:

«Մեզ սկզբում հայտնի էր, որ ընկերության նախագահի պաշտոնը վարում է «Կրեդիտ-Երեւանի» դեկավար, ԱԺ պատգամավոր Մարտին Հովհաննիսյանը: 2001 թ. տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ նա եւս մեկ անգամ հայտարարեց այդ մասին... Բայց բոլորովին վերջերս «Գոլոս Արմենիի» թերթի մի հրապարակումից տեղեկացանք, որ «Բազալտում» լայն իրավունքներ ունեն նաեւ մոսկովյան «Մարկոս-հոլդինգը» եւ ինչ-որ «Տրանսցենտր» ընկերություն»,- բացատրեցին այցելուները՝ հավելելով, որ չնայած «վերահսկիչ փաթեթի» հետ կապված անորոշությանը, այնուամենայնիվ, իրենց բոլոր պահանջները հասցեագրված են մնում «Բազալտի» տնօրինությանը, ի դեմս՝ գործադիր տնօրեն Սենիկ Հովհաննիսյանի:

Իսկ նա, հուսանք, ՀՀ արժեթղթերի հանձնաժողովին հստակ պարզաբանումներ կտա մի շարք առանցքային խնդիրների մասին: Օրինակ՝ ի՞նչ պատճառով են «Բազալտ-Ջրվեժ» ԲԲԸ-ի 2001 թվականի ծախսերը (165,4 մլն դրամի վնասի պայմաններում) կազմել 167,9 մլն դրամ, եթե 1998-ին այդ թիվը (28,8 մլն դրամ վնասի դեպքում) չի գերազանցել 50 մլն դրամի սահմանագիծը...

«Բազալտում» առկա իրավիճակը, հատկապես փոքր բաժնետերերի շահաբաժինների չվճարման հիմնահարցի ֆոնի վրա, թերեւս կարող է նաեւ մեկնաբանվել իբրեւ բոլորիս քաջ ծանոթ, տխրահռչակ իրողություններից մեկը: Սակայն, ըստ էության, չարժե մոռանալ, որ նման մասնավոր դեպքերով է կանխորոշվում երկրի ներդրումային գրավչությունն ու տնտեսական բարեփոխումների գործընթացի հաջողությունը:

ԿԻՆՍ

Կառավարությունը հաստատակամ է

«ԱրմենՏելի» կողմից սակագների իջեցումը չի կարող պատճառ դառնալ, որպեսզի եղած բոլոր հարցականները մոռացության մատնվեն: Այդ երկու հարցերը իրար հետ կապ չունեն: Շարունակվում են «ԱրմենՏելի» գործունեության եւ ներդրումների շուրջ կառավարության անհամաձայնությունները հաստատելու ուղղությամբ աշխատանքները: Նախ Աժ ժամանակավոր հանձնաժողովը շարունակում է ուսումնասիրություններ կատարել եւ պատրաստվում է զեկույցով հանդես գալ խորհրդարանի նիստում: Այս ուսումնասիրությունների համար հիմք են հանդիսանում ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության կողմից 1999թ. կատարված ուսումնասիրությունը, ինչպես նաեւ՝ ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի ուսումնասիրությունը:

Ի պատասխան «Երկրի» հրապարակումների ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարության լրատվական ծառայությունից ստացված պարզաբանման համաձայն, նախարար Անդրանիկ Մանուկյանի գլխավորած միջգերատեսչական հանձնաժողովի ուսումնասիրությունը եւ եզրակացությունը մնում են ուժի մեջ, եւ կառավարությունը շարունակելու է հետապնդել հարցը: Ինչպես իր մամլո ասուլիսում վստահեցրել է նախարարը. «Սակագնային փոխզիջումները կապ չունեն այն տարածայնությունների հետ, որ առկա են «ԱրմենՏելի» կատարած ներդրումների շուրջ. ոչ «ԱրմենՏելը», ոչ էլ մենք չենք հրաժարվում մեր դիրքորոշումներից, այդ հարցերը կլուծվեն դատական կարգով»: Խնդիրը ներկայացվել է դատարան, եւ պետք է հուսալ, որ համապատասխան դատական գործընթացը հանգուցալուծում կունենա, կատարված մանրամասն ու խոր մասնագիտական ուսումնասիրությունը դատական կարգով կդառնա իրավական փաստաթուղթ:

Ջրի խնդիրը՝ օրակարգում

Կառավարությունը հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք» եւ «Ջրօգտագործողների ընկերությունների եւ ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքների նախագծերին: Օրենքների կարեւորությունն ընդգծելով նշվեց, որ դրանց ընդունումը նպատակ ունի բարձրացնել խմելու եւ ոռոգման ջրի համակարգերի արդյունավետությունը, կարգավորել այդ ոլորտի իրավահարաբերությունները եւ զարգացնել գյուղացիական տնտեսությունների ինքնակառավարումը:

ՀՀ հողային օրենսգրքի պահանջների համաձայն, կառավարությունը որոշում է ընդունել քաղաքացիների եւ իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների կառուցումը սահմանափակելու մասին: Հաստատվեց այն համայնքների ցանկը, որոնց վարչական սահմաններում նշված աշխատանքներն արգելվում են: Ցանկում չընդգրկված համայնքներում առնվազն 1 հա տարածք ունեցող հողամասերի վրա թույլատրվեց կառուցել մինչեւ 150 քմ բնակելի եւ 300 քմ գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր եւ շինություններ: Բոլոր համայնքների վարչական սահմաններում ընդգրկված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա թույլատրվեց կառուցել կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր եւ շինություններ կառուցապատման մինչեւ 30 քմ ընդհանուր մակերեսով:

«Գործում ենք օրենքով»

Մեղրու մաքսակետ հասանք վերջալույսին: Հերթական ծանրաքաշ բեռնատարը կամրջի վրա ոուս սահմանապահների կողմից ստուգվելուց հետո դանդաղ ընթացքով առաջանում էր դեպի հայկական սահմանը: Իմ հույսը, թե ուր որ է՝ ականատես կլինեմ մաքսային ծառայությունների գործունեության ողջ ընթացքին, շատ շուտով ի չիք դարձավ:

ՀՀ մաքսային պետական կոմիտեի Մեղրու մաքսակետի պետ Սամվել Սաֆարյանն ինձ տեղեկացրեց, որ այս կարգի բեռները, որոնք պատկանում են որեւէ իրավաբանական անձի (կազմակերպության) մաքսազերծվում են հանրապետության տարբեր մարզերում տեղակայված մաքսատներում: Այստեղ իրականացվում է տրանսպորտային միջոցների ստուգումն, ու արվում են մաքսային ձեւակերպումներ հետագա մաքսազերծման համար:

Ֆիզիկական անձանց (անհատ քաղաքացիներ, զբոսաշրջիկներ) պարագայում, սակայն, գործընթացն ամբողջությամբ կատարվում է մաքսակետում: Ի դեպ, հենց ֆիզիկական անձանց սահմանն անցնելուն էր նվիրված մեր նախորդ հրապարակումը, ուր պարզորոշ ասված էր, թե ամեն ինչ չէ, որ կարգին է այստեղ, եւ միշտ չէ, որ մաքսակետի ծառայությունները գտնվում են անհրաժեշտ բարձրության վրա:

Մեր հանդիպման ժամանակ աշխատակիցները պնդում էին, թե զբոսաշրջիկներից եւ մյուս ուղեւորներից լրացուցիչ գումարներ պահանջելու մասին բողոքները իրականությանը չեն համապատասխանում: Հատկապես ուշադրության են արժանի երթուղային ավտոբուսները, որոնց վարորդները միայն իրենց հայտնի խորշերում ու պահախցերում փորձում են չհայտարարագրված ծանրոցներ թաքցնել: Երբեմն այդ ծանրոցներում ու փաթեթներում հայտնաբերվում են ապրանքներ, որոնց կամայական ներկրումը Հայաստան օրենքով արգելված է: «Զբոսաշրջիկները հաճախ իրենք են ուշացման պատճառ դառնում: Նրանք փորձում են ամեն կերպ խուսափել մաքսային վճարներից, որոնք, ըստ օրենքի, գանձվում են նրանցից թե մուտքի եւ թե ելքի ժամանակ,- ասաց մաքսակետի ղեկավարը,- նրանց թվում է, թե մեր կողմից դա կամայականություն է»:

ՆԳ անձնագրային բաժնի աշխատակիցներն էլ իրենց հերթին վկայեցին, որ քիչ չեն անձնագրային ռեժիմի խախտման դեպքերը (վիզայի ժամկետի հարցը): Ուղեւորներից մեկի փաստաթղթերում հայտնաբերվող անճշտությունը, բնական է, պատճառ է դառնում, որ ողջ խումբը լրացուցիչ ժամանակ կորցնի:

Մաքսատան շինությունը բոլոր հնարավորություններն ունի օտարերկրացի զբոսաշրջիկների միջազգային չափանիշներին համապատասխան ընդունելության համար: Սակայն, ինչպես նշում է մաքսակետի ղեկավարը, տանտերերն ստիպված են լինում որոշ խստություններ կիրառել: Լինում են դեպքեր, երբ մարդկանց սպասասրահից դուրս են հրավիրում: «Որոշները չեն սիրում հերթ կանգնել, շարքով մոտենալ համապատասխան պատուհանին, ուղեբեռն անկանոն թափթփում են այս ու այն կողմ, ոտաբոբիկ զբոսնում սրահներում, ծխախոտի մնացորդները նետում որտեղ պատահի»: Այդուհանդերձ, թերեւս նման աշխատանքում հարկ է հաշվի առնել տարբեր ազգերի սովորությունները:

Ծանոթանալով մաքսակետի աշխատանքին եւ մի հայացք ձգելով բողոքների ու առաջարկությունների գրքին այն եզրակացությանը եկանք, որ սահմանն անցնողների մեջ մեծ թիվ են կազմում իրանահայերը, որոնք էլ մեծապես նպաստում են Իրանի եւ Հայաստանի միջեւ թե տնտեսական եւ թե զբոսաշրջության բնագավառում կապերի ամրապնդմանը: Կարծում ենք արդեն ժամանակն է, որ Ջավախքի եւ նրա հարակից շրջանների հայ ազգաբնակչության օրինակով, իրանահայությանը նույնպես Հայաստան գալու եւ վերադառնալու արտոնություններ տրամադրվեն: Ասվածն, անշուշտ, ենթադրում է մաքսային օրենսդրության որոշակի փոփոխություններ: Խոսքը վերաբերում է ավելորդ խստություններին եւ մաքսավճարներին, որոնք իրենց կնիքն են դնում ներկրվող ապրանքների գնի եւ դրան համապատասխան սպառման գործընթացի վրա:

ԻԻՀ հետ հարաբերությունների այսօրվա մակարդակը նման վստահության համար հիմքեր տալիս է եւ, իրականացնելու դեպքում, շրջադարձային փուլ կդառնա հայ-իրանական կապերի հետագա ամրապնդման համար, ինչին ձգտում է նաեւ իրանական կողմը: Արաքսի հակադիր ափին կառուցվող մաքսատան նոր շենքը դրա վառ ապացույցն է:

ԷԴԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Արտաքին պարտքի վտանգները

Ապրիլի 20-ին Վաշինգտոնում կայացել է Արժույթի միջազգային հիմնադրամի Միջազգային արժույթի եւ ֆինանսների կոմիտեի նիստը, որի ընթացքում հաստատվել է ԱՊՀ առավել աղքատ յոթ երկրների արտաքին պարտքի կրճատման եւ աղքատության նվազեցման ծրագիրը: Հայաստանը այդ յոթնյակի մեջ է: Այդ փաստաթղթով դոնորները խոստացել են վերակառուցել, իսկ որոշ երկրների դեպքում, նաեւ՝ մասամբ դուրսգրել գոյացած պարտքերը, եթե շահառու երկրները ավելի հեռեւողական լինեն տնտեսական բարեփոխումների մեջ:

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Առայժմ Հայաստանը արտաքին պարտքի մակարդակով դեռեւս չի հայտնվել անհուսալի պարտապան երկրների շարքում, սակայն, մյուս կողմից՝ այժմ ու առաջիկա մի քանի տարիներին չի կարող յոլա գնալ առանց արտաքին օժանդակության:

ԱՊՀ երկու երկրների պարագայում արդեն վերջնական հստակություն կա. դոնորների փարիզյան ակումբի շրջանակներում կվերկառուցվեն Վրաստանի եւ Ղրղզստանի արտաքին պարտքերը, դրանց վճարումը կհետաձգվի տասը տարով՝ առանց դուրսգրման իրավունքի: Տաջիկստանը եւ Մոլդովան եւս, ըստ փաստաթղթի, կարող են նման օգնության հավակնել:

Հայաստանը, թերեւս, այս երկրների խնդիրները չունի, թեեւ աղքատության առումով ավելի բարվոք վիճակում չէ: Ասենք, Վրաստանում կամ Ղրղզստանում արտաքին պարտքը գրեթե հավասար է այդ երկրների Համախառն ներքին արդյունքին, մինչդեռ Հայաստանում այն չի անցնում երկրի ՀՆԱ-ի 42 տոկոսից: Ընդ որում, միջազգային ֆինանսական կառույցների փորձագետները արտաքին պարտքը մարելու հարցում Հայաստանի հնարավորությունները միանգամայն բավարար են համարում: Փորձագետները առաջիկա տասնամյակում ՀՀ տնտեսության զարգացման երկու հիմնական սցենար են կանխատեսում՝ հիմնական եւ հոռետեսական:

Եթե մինչեւ 2010 թվականը տնտեսության զարգացումը ընթանա, այսպես ասած, «հիմնական» սցենարով, ապա արտաքին պարտքի ճնշումը պետական բյուջեի վրա կլինի միանգամայն տանելի. այդ սցենարը յուրաքանչյուր տարվա համար ենթադրում է տնտեսական աճ՝ միջին հաշվով 5,5 տոկոս, ավելի քան 9 տոկոս արտահանման աճ, իսկ կառավարության հավաքած հարկերը չպետք է պակաս լինեն երկրի համախառն ներքին արդյունքի 17,4 տոկոսից:

Մյուս կողմից, փորձագետները չեն բացառում նաեւ տնտեսության այսպես կոչված «հոռետեսական» սցենարը, երբ միջին տնտեսական աճը չի անցնի 4 տոկոսից, արտահանման աճը՝ 7,5 տոկոսից, իսկ ներդրումները կկազմեն համախառն ներքին արդյունքի 4 տոկոսից ոչ ավելին:

Այդուհանդերձ, այս տարբերակի դեպքում էլ դոնորները նպաստակահարմար չեն դիտում Հայաստանի արտաքին պարտքից ինչ-որ մաս գիջելը կամ դուրսգրելը:

Հայաստանի արտաքին պարտքի շարժն ու նրա սպասարկումը, պատասխանատուների հավաստմամբ, առայժմ գտնվում է կառավարելիության տիրույթում, եւ անհանգստանալու հիմքեր չկան:

ՀՀ արտաքին պետական պարտքի շարժը

1996-2001թթ. (մլն դոլար)



Համաշխարհային բանկի պատասխանատուների հավաստմամբ, Հայաստանը, իբրեւ Համաշխարհային բանկի հաճախորդ, մոտ հեռանկարում կարող է դառնալ, այսպես ասած, «խառը վարկավորում» ստացող երկիր եւ օգտվել ոչ միայն աղքատ երկրների համար նախատեսված երկարաժամկետ ու արտոնյալ պայմաններով վարկերի պատուհանից, այլեւ բարձր վարկային ռեյտինգ ունեցող երկրներին տրվող ավելի թանկ վարկերի պատուհանից:

Պետք է ենթադրել, որ տարածաշրջանի ամենից աղքատ ու հակամարտություններից հյուծված երկրներին ֆինանսական օգնության ավելացումը հակահաբեկչական ծրագրի բաղադրիչներից մեկն է, այլապես, անհասկանալի է, թե ինչու, օրինակ, արտաքին պարտքի ոչ այնքան վատ դիրք ունեցող Հայաստանը դրվել է նույն հարթության վրա, ինչ որ, ասենք, պարտքի հետ լուրջ խնդիրներ ունեցող Տաջիկստանը, Վրաստանը, Մոլդովան կամ Ղրղզստանը:

Համաշխարհային բանկը ավելի վաղ հայտարարել էր, թե ծրագրում է նշված յոթ երկրներին տրվող ընդհանուր վարկավորումը այս տարի հասցնել 420 միլիոն դոլարի՝ նախորդ տարվա 337 միլիոն դոլարի դիմաց: Թե այդ գումարից հավելյալ ինչքան կստանա Հայաստանը՝ առայժմ պարզ չէ. մի կողմից՝ առայժմ Հայաստանը արտաքին պարտքի մակարդակով դեռեւս չի հայտնվել անհուսալի պարտապան երկրների շարքում, սակայն, մյուս կողմից՝ այժմ ու առաջիկա մի քանի տարիներին չի կարող յոլա գնալ առանց արտաքին օժանդակության: Իր հիմնական դոնորներից Հայաստանն այս տարի ակնկալում է ստանալ շուրջ 90 միլիոն դոլարի արտաքին վարկավորում. այդ գումարից 39 միլիոն դոլարն ակնկալվում է Արժույթի միջազգային հիմնադրամից, մնացածը՝ Համաշխարհային բանկից, ինչպես կառուցվածքային բարեփոխումների օժանդակության, այնպես էլ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղվող նպաստակային վարկերի տեսքով: .

Այս տարի 13-ական միլիոն դոլարի երեք մասաբաժնով հատկացումները Արժույթի միջազգային հիմնադրամից Հայաստանի կառավարությունը կստանա, եթե բավարարի հիմնադրամի կոշտ պայմանները. այդ գումարներով պետք է համալրվեն Կենտրոնական բանկի արտաքին պահուստները: Դրանց հաշվին է հիմնականում ապահովվում ազգային դրամի կայուն փոխարժեքը:

Իսկ Հայաստանի արտաքին պարտքի դիրքը այժմ անհամեմատ լավ վիճակում է, քան 1999-ին, բացի այդ գույքով Ռուսաստանի պարտքի մարման դեպքում՝ վիճակը էլ ավելի կլավանա, քանի որ ռուսական վարկերը սպասարկման առումով շատ «թանկ» վարկեր են ու պետական բյուջեի վրա տարեկան 18-20 միլիոն դոլար են «նստում»:

Միջին խավը առայժմ չի երեւում

Հայաստանը, անշուշտ, եկամուտների շատ բարձր բեւեռացում ունեցող երկիր է: Անհավասարությունն ամենուրեք է՝ կրթության, սպառման, հարստության, ընտանեկան արտարողությունների, ծեւերի ու գոնների նշման, կենցաղի, զվարճանքների ու հանգստի կազմակերպման մեջ եւ այլն: Սակայն Հայաստանի հիմնական, կարելի է ասել՝ ընդհանուր սոցիալական հիմնախնդիրը եկամուտների միջին մակարդակի շատ ցածր լինելն է, բայց ոչ այնքան, ինչքան մատուցվում է պետական վիճակագրության կողմից:

Ըստ պաշտոնական թվերի, երկրում աղքատության սահմանագծից ներքեւ ապրում է բնակչության 54-55 տոկոսը. ասվում է այսքան բնակչության շրջանում պաշտոնական եկամուտները ավելի ցածր են, քան կենսանվազագույնն է. սա, իհարկե, քաղաքական շահարկումների հարմար նյութ է: Իրականում պատկերը ամենեւին էլ պարզ չէ. Հայաստանը նաեւ շատ բարձր ստվերային եկամուտների երկիր է, նաեւ մեծ ծավալի արտաքին ոչ պաշտոնական տրանսֆերտներ ստացող երկիր. գնահատականները հաստատում են դա: Գնահատումներից մեկի համաձայն, արտասահմանում աշխատող մեր հայրենակիցները իրենց հայաստանյան ընտանիքներին են փոխանցում երկրի Համախառն ներքին արդյունքի 5-6 տոկոսը (110-120 մլն դոլար), մեկ ուրիշ, ավելի բարձր գնահատականի համաձայն, դրանք կազմում են երկրի ՀՆԱ-ի 8-9 տոկոսը

(160-180 մլն դոլար):

Մեկ այլ տիպական հանգամանք էլ կա. տարաբնույթ քննարկումներում, չգիտես ինչու, եկամուտները թաքցնելու վարքագիծը վերագրվում է բացառապես հարուստ խավին, մինչդեռ դա միակողմանի մոտեցում է: Իրականում ստվերային եկամուտները բնորոշ են որեւէ աշխատանք կատարող ու ինչ-որ եկամուտ ստացող մարդկանց մեծ մասին՝ լինի դա բյուջետային աշխատող, մասնավոր ոլորտի վարձու աշխատող թե ինքնազբաղված:

Իհարկե, ոչ ոք չի ժխտում, որ բնակչության 15-20 տոկոսը կարող է լինել բացարձակ աղքատ ու ապրել պաշտոնական կենսանվազագույնից ցածր մակարդակում: Մյուս կողմից, հարուստ կամ շատ հարուստ կարող է լինել բնակչության առավելագույնը 5-10 տոկոսը: Իսկ որտե՞ղ է բնակչության մնացած 60-70 տոկոսը, բնակչության ո՞ր խավին նրանց կարելի է դասել: Սովորաբար այս մարդկանց էլ, նկատի ունենալով պաշտոնական ցածր վաստակները, վերագրում են աղքատների բանակին ու հարցը փակվում է:

Սակայն իրականում մեր հասարակությունն իր սոցիալական կառուցվածքով այնքան էլ «տափարակ չէ» ու այնքան բեւեռացված, որքան թվում է: Համաշխարհային փորձից հայտնի է, որ աղքատության դեմ, այսպես կոչված, «հասցեագրված» պայքարն իմաստ ունի, երբ նրա տարածման մասշտաբները չեն գերազանցում որոշակի թույլատրելի, ասենք, 15 տոկոսի մակարդակը: Այն, որ դա այդպես է, երեւում է նաեւ հայաստանյան փորձից. երբ ներդրվեց «Փարոս» համակարգը, նրանում ընդգրկված էր հայաստանյան ընտանիքների 35-40 տոկոսը, հետագայում գործողության մեջ դրված ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված ընտանիքների թիվը չէր անցնում 20-25 տոկոսից, ինչը եւս նորմալ սոցիալական քաղաքականության տեսանկյունից անտրամաբանական է: Այդ պատճառով այս ընթացքում էլ հետզհետե կրճատվել է «աղքատության նպաստներ» ստացող ընտանիքների թիվը: Փորձը ցույց է տալիս, որ հասցեագրված սոցիալական օգնությունը արդյունավետ է, երբ օգնություն ստացող ընտանիքների թիվը չի գերազանցում ընդհանուր ընտանիքների 10 տոկոսը:

Դառնանք միջին խավին. կա՞, արդյոք, մեզանում միջին խավ: Ոմանք հակված են ժխտելու նրա գոյությունը, ոմանք էլ ընդունելով համարում են, որ նրա տարածման մասշտաբները շատ փոքր են: Թերեւս, ժխտել միջին խավի գոյությունը անմտություն է. այն միշտ եղել է, կա ու կլինի: Խնդիրն այն է, թե ի՞նչ է հասկացվում միջին խավ ասելով: Բազմաթիվ դասական սահմանումներ կան: Թերեւս, ճիշտ է այն, որ միջին խավի հիմնական բնութագրիչները նույնացվում են առաջին հերթին եկամուտների եւ սպառման որոշակի չափերի հետ: Օրինակ, միջին խավերը սննդի վրա ծախսում են ընտանիքի ամբողջական եկամտի 1/3-ից ոչ ավելին, որոնք աշխատանքը դիտում են որպես ինքնաարտահայտման միջոց ու իրենց մտայնության բերումով ի վիճակի են հարմարվել փոփոխվող պայմաններին:

Իհարկե, մեր պայմանների վերաբերմամբ բնութագրել միջին խավերին բնորոշ եկամուտների չափը չափազանց դժվար է. խոսք կարող է լինել միայն եկամտի ինչ որ միջակայքերի մասին. ասենք միջին խավի մեջ կարելի է ընդգրկել այն ընտանիքներին, որոնց շնչային ամսական եկամուտները տատանվում են 80-120 դոլարի սահմաններում: Թերեւս, ավելի բարձր գնահատականը եւս չպետք է բացառել:

Այդուհանդերձ, միջին խավի որոշիչ դերը մեզանում առայժմ չի երեւում. ոչ միայն այն պատճառով, որ այն փոքրաքանակ է (ընտանիքների 25-30 տոկոսը), այլեւ այն պատճառով, որ նրա ձեւավորման ու ամրապնդման համար պայմաններ չկան: Որոշ դեպքերում ազատական ու ժողովրդավարական բարեփոխումների դրական կամ բացասական արդյունքների մասին դատում են նաեւ այն բանից ելնելով, թե հասարակության ընդհանուր կառուցվածքում ի՞նչ տեղ ունեն միջին խավերը, դարձե՞լ են, արդյոք, նրանք մեծամասնություն, թե՞ դեռեւս փոքրամասնություն են: Իսկ դրանով էլ որոշվում է, թե այս կամ այն երկրի ժողովրդավարական կամ իրավական պետություն դառնալու շանսերը որքան են:

Շ. ՄԻՆԱՍՅԱՆ

Չձեւավորվող աշխատանքային շուկա

Զբաղվածության հանրապետական կենտրոնի տվյալներով, մեր երկրում աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը, անցյալ տարվա դրությամբ, շուրջ 163 հազար է: Սա ընդամենը զբաղվածության կենտրոններում գրանցվածների տվյալն է, իսկ իրականում նրանց թիվը ավելին է: Վիճակագրության պետական խորհրդի անդամ Յուրա Պողոսյանի հավաստիացմամբ, հանրապետությունում իրական գործազրկության չափն անհամեմատ գերազանցում է պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը, իսկ աշխատանքի տարածաշրջանային առանձին շուկաներում առավել լարված իրավիճակ է:

Նաիրա ՊՈՂՈՍՅԱՆ

Շատ գործազուրկներ չեն գրանցվում զբաղվածության կենտրոններում՝ վերջիններիս հանդեպ չպատճառաբանված, բայց հասկանալի անվստահությունից ելնելով: Ըստ նրանց՝ յուրաքանչյուրն ինքն իր գլխի ճարը պիտի տեսնի, նման կենտրոնների միջոցով աշխատանք գտնելը չափից դուրս ձգձգվող գործընթաց է, ուր միշտ չէ, որ անկողմնակալ մոտեցում է ցուցաբերվում միեւնույն մասնագիտությամբ դիմողների նկատմամբ: Ինչպես ամենուր, այստեղ էլ ազդեցություն են ունենում ծանոթ-բարեկամական կապերը: Գործազուրկի կարգավիճակ ստանալու պահից մինչեւ աշխատանքի տեղավորման պահը ավելի քան 14,4 ամիս է տեւում: Զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանք փնտրող քաղաքացիների աշխատանքի տեղավորման ցածր արդյունավետության մասին է վկայում եւ այն փաստը, որ 2001թ. դեկտեմբերին մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 310 չզբաղված մարդ, իսկ աշխուժի հանդեպ պաշտոնապես ներկայացրած պահանջարկը՝ 520 մարդ:

Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվի մասին պրն Պողոսյանի ներկայացրած աղյուսակից պարզ է դառնում, որ, ըստ կրթության եւ տարիքային խմբերի, գերակշռում են 30-50 տարեկան, բարձրագույն կրթությամբ գործազուրկները, ընդ որում՝ կանայք ավելի շատ են, քան տղամարդիկ:

Աշխատանքի շուկայում ծանր իրավիճակ է ստեղծվում աշխատանքային տարիք մուտք գործող պատանիների եւ աղջիկների համար, ինչը կապված է ոչ միայն աշխատատեղերի պակասի, այլեւ աշխատուժի առաջարկի եւ պահանջարկի կառուցվածքային անհամամասնության աճի հետ:

Գործազրկության լայնամասշտաբ ֆոնի վրա էժան աշխատուժ ձեռք բերելու հնարավորությունից օգտվելով՝ գործատուն երբեմն անհեթեթության հասնող պահանջներ է ներկայացնում, ասենք՝ հաճախ ամեն ինչ առաջնային է, բացի գիտական պոտենցիալից, կամ ընդհակառակը՝ հավաքարար, մատուցող կամ բանվոր աշխատելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն, լեզուների իմացություն եւ այլն: Աշխատուժի հանդեպ ոչ ճիշտ քաղաքականություն է վարվում նաեւ տարիքային հարցում: Խիստ սահմանափակումներն այնպիսի տպավորություն են թողնում, որ մեր երկրում միջին տարիքի մարդը, անկախ ունակություններից, չպիտի աշխատի:

Այժմ զբաղվածների թիվն ամենամեծն է արդյունաբերության ճյուղերում: Տարեվերջի դրությամբ, գործատուն պահանջարկ չունի ինժեների, վարկավորման եւ ապահովագրության, գիտության եւ գիտական սպասարկման ոլորտում, իսկ մշակույթի եւ արվեստի ընդամենը երեք մասնագետ է նրան պետք: 1994 թվից մինչ օրս չկա գյուղատնտեսի եւ ոստիկանի պահանջարկ, միաժամանակ մեկական մանկավարժի ու իրավաբանի եւ երկու տնտեսագետի կարիք կա: Հետաքրքիր է, որ ութ տարվա մեջ հաշվողական տեղեկատվական սպասարկման բնագավառում միայն մեկ անգամ է պահանջվել հինգ մասնագետ՝ 2000 թ.: Սա այն դեպքում, երբ հիշյալ ասպարեզում հազարավոր մասնագետների կարիք կա նույնիսկ զարգացած երկրներում, իսկ մեզանում հիմա միշտ չէ, որ անհրաժեշտ գիտելիք ունեցողը աշխատանքով ապահովված է:

Աշխատանքի շուկայի ձեւավորմանը խանգարող այլ հանգամանքներ եւս կան: Չնայած հանրապետության զբաղվածության ծառայությունները մասնակցում են կադրերի վերապատրաստման գործին, ձեռնարկությունները նրանց հետ հույսեր չեն կապում: Ծառայություններին չեն տեղեկացնում ազատ աշխատատեղերի մասին, իսկ աշխատանքից ազատվողին չեն պարտավորեցնում զբաղվածության կենտրոններում գրանցվել:

Սկսած 1990-ականներից, ՀՀ աշխատանքի շուկան աչքի է ընկել զբաղվածության անկմամբ եւ գործազրկության ակնհայտ աճով: Պաշտոնական վիճակագրական տվյալները հիմնականում չեն արտացոլում աշխատանքային շուկայի, աշխատանքի առաջարկի եւ պահանջարկի իրական պատկերը երկրում:

Հարկ է նշել նաեւ, որ մասնագետներ պատրաստելիս այնքան էլ հաշվի չեն առնվում կազմակերպությունների այսօրվա պահանջներն ու հնարավորությունները, որպեսզի երիտասարդ մասնագետն աշխատի բուհում ձեռք բերած մասնագիտությամբ, եւ աննպատակ չլինեն ուսումնառության համար կատարած ծախսերը: Հրատապ խնդիրներից է կադրերի պատրաստումը եւ վերապատրաստումը:

Աշխատանքի շուկայի ձեւավորման հարցում անհրաժեշտ է ցուցաբերել առավել հետեւողական մոտեցում, որը պայմանավորվում է աշխատանք փնտրողի, գործատուի եւ զբաղվածության ծառայությունների միջեւ փոխադարձ վստահությամբ եւ արդյունավետ գործնական հարաբերություններով:

ՕՐԵՆՔ

Փոփոխություն համատիրությունների մասին օրենքում

Աժ սոցիալական, առողջապահության եւ բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովը վերջերս քննարկեց բազմաբնակարան շենքերի կառավարման եւ համատիրությունների մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու հարցը: Այն շուտով կներկայացվի երկրորդ ընթերցման: Ինչպես հայտնեց քաղաքաշինության նախարարության կոմունալ եւ բնակարանային քաղաքականության վարչության պետ Կամո Խաչատրյանը, առաջարկվող բարեփոխման մեջ հիմնականում դիտարկվում է քաղաքացիների պաշտպանվածության խնդիրը՝ ուղղված ընդհանուր սեփականության մեջ սեփականատիրոջ իրավունքների առավել հստակ ֆիքսման եւ տնօրինման հարցերում նրա պարտականությունների բարձրացմանը:

Օրենքի ընդունումը կնպաստի, որպեսզի քաղաքաշինության նախարարությունը այս տարվա ընթացքում կառավարությանը ներկայացնի համատիրություններին աջակցելու ծրագիր, որի ընդունումից հետո կգտնվեն ֆինանսական աղբյուրներ՝ օգնելու համար քաղաքացիներին՝ լուծելու իրենց շենքերի պահպանման խնդիրները: «Այստեղ մեծ դեր ունի նաեւ քաղաքացիների ակտիվությունը, այն, որ նրանք որոշում կայացնեն, թե իրենց շենքի կառավարման համար ինչպիսի մարմին պիտի ընտրեն: Միայն այդ դեպքում ցանկացած օժանդակության ծրագիր կարող է ուղղվել շենքերի բարելավմանը՝ ներառելով նաեւ ջրամատակարարման եւ էներգախնայողության հետ կապված խնդիրները»,- ասաց պարոն Խաչատրյանը:

ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՅՈՒՅՑ

Հողային աճուրդ-2

Երկուշաբթի՝ ապրիլի 22-ին, կրկին «մարդաշատ էր» ՀՀ կառավարության նախագիծը: Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի բնակիչների օրինակով արդարության եպեւից մայրաքաղաք էին եկել նույն մարզի Վարդենիսի ենթաշրջանի Մեծ եւ Փոքր Մասրիկ, Նորակերտ, Լուսակունք եւ Խաչաղբյուր գյուղերի բնակիչները, որոնք սարսափով են սպասում ապրիլի 26-ին կայանալիք հողային աճուրդին:

Գյուղացիները վստահ են, որ Գեղարքունիքի մարզպետ Վահագն Հակոբյանի գործողությունները ապօրինի են, քանզի աճուրդի են հանված ոչ թե անօգտագործելի եւ չյուրացված հողերը, այլ տարիներ շարունակ համայնքի կողմից մշակվող եւ անգամ այս պահին բերքի տակ գտնվող ցանքատարածքները:

- Նման մի փորձ նա կատարել է դեռեւս 2001 թվականին աշնանացանի եւ բազմամյա խոտաբույսերի մի շարք ցանքատարածքներ օտարելով ինչ-որ «Մկո» կազմակերպության,- ասաց Մեծ Մասրիկի բնակիչ Ռոմիկ Ավագյանը,- բայց համայնքի կողմից հարցը բարձրացվելուց հետո հողը թողեցին գյուղացիներին՝ բանավոր պայմանավորվածությամբ, որ խնդիրը վերանայվի եւ վերականգնվի հողօգտագործման նրանց իրավունքը:

Ցուցարարներից շատերը, որ քաջատեղյակ էին ՀՀ «Հողային օրենսգրքին», մատնանշում էին հոդ. 75-ի 4, 162-ի 2, 118-ի 4,6,7 կետերը, որոնք օրը ցերեկով ոտնահարվում են:

- Ինչպե՞ս կարելի է աճուրդով վաճառել հողաբաժինը, երբ նրա վրա գյուղացին քրտինք է թափել, մաքրել քարերից, վարել, պարարտացրել, վերջապես՝ ցանել:

Մարդիկ զայրացած են հատկապես աճուրդի ստորացուցիչ պայմաններից: Համայնքներ կան, որոնցում աճուրդի լոտերը կազմված են 1-7 հա հողակտորներից, իսկ մի շարք համայնքներում դրանք 70-100 հեկտարանոց տարածքներ են: Եթե հաշվի առնենք, որ մեկ հեկտարի մեկնարկային գինը հասնում է 191 հազար դրամի, ապա աճուրդի ժամանակ խոշոր ցանքատարածքների գինը կարող է տատանվել 20-25 մլն դրամի սահմաններում:

Այո, ցավալի իրողություն է: Այսօր ո՞ր գյուղացիական տնտեսությունը կարող է այդքան վճարել: Պարզ չէ՞, միթե, որ ակնհայտ փորձ է արվում հողը գյուղացուց խլելու եւ այն քաղաքից եկած մի մեծահարուստի տալու: Եվ դեռ հայտնի չէ, թե քաղաքից եկած այդ մեծահարուստն ինչպես կվարվի գյուղատնտեսության համար պիտանի հողերի հետ, որոնք տարիներ շարունակ կերակրել են ոչ միայն իրենց մշակին, այլեւ երկրի բնակչությանը:

- Մարդկանց հուսադրող խոստումներով ճանապարհ դնելը, որ մեծ հաջողությամբ է անում մեր վարչապետը, դեռ հարցի լուծում չէ,- հայտարարում էին ցուցարարները,- մեր հողն էլ մարզպետի սեփականությունը չէ, որ ինչպես ուզենա վարվի:

Իսկ մնացածը լրացնում էին պաստառները.

- Դադարեցրե՛ք արտագաղթը:

- Դադարեցրե՛ք մեր հողերի բիզնեսը:

Հասունանում է Ջհանգիրյանի պաշտոնանկությունը

«Հոկտեմբերի 27»-ի գործով նախաքննության ընթացքում Հարություն Հարությունյանի եւ Նաիրի Բաղալյանի նկատմամբ խորթ մեթոդներ կիրառելու հայտարարությունների հիման վրա հարուցված քրեական գործի քննությունը խոստանում է լինել շրջադարձային, եթե, իհարկե, հանրապետական դատախազությունը հետեւողական գտնվի եւ հնարավորություն ունենա մինչեւ վերջ իրականացնել օբյեկտիվ քննություն:

Սոնա ՏՐՈՒՋՅԱՆ

Եթե անգամ ընդունենք, որ Ջհանգիրյանը փեղյակ չի եղել իր ենթակաների կողմից կատարվող անօրինական գործողություններին եւ անգամ նշյալ սղագրություններին, ապա դա ամենեւին չի մեղմացնում նրա պատասխանատվության չափը: Ավելին, լրացուցիչ անգամ ապացուցում է, որ նա պարզապես բարոյական իրավունք չունի շարունակելու պաշտոնավարումը:



Ճիշտ է, մարտի 4-ին հարուցված քրեական գործի շրջանակներում մեղադրանք դեռ որեւէ մեկին չի առաջադրվել, սակայն բացառված չէ, որ առաջիկայում բարձրացվի զինդատախազության միանգամից երեք քննիչի ձերբակալության հարցը: Խոսքը մասնավորապես վերաբերում է Սամվել Հովհաննիսյանին, Խաչիկ Ղալթախչյանին եւ Հրաչ Այվազյանին, որոնք, ըստ մեր ունեցած տեղեկությունների, մասնակցություն են ունեցել ոչ միայն Հ. Հարությունյանի եւ Ն. Բաղալյանի, այլեւ մի շարք այլ անձանց, ներառյալ վկաների նկատմամբ կիրառված անօրինականություններին, երկրի բարձրագույն իշխանության ենթադրյալ մեղսակցության մասին գրպարտչական ցուցմունքներ կորզելու աշխատանքներին: Ավելին, մեր աղբյուրների հավաստմամբ, հանրապետական դատախազությունը սիրապետում է ոչ միայն նշյալ քննիչների մասնակցությունը վկայող փաստերի, այլեւ մի շարք այլ հետաքրքրական նյութերի, որոնք խիստ անհարմար վիճակ են ստեղծել նաեւ զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանի համար: Խնդիրն այն է, որ մինչեւ վերջերս իր հրապարակային բոլոր ելույթներում Գագիկ Ջհանգիրյանը կտրականապես բացառում էր զինդատախազության քննիչների մասնակցությունը թե խոշտանգումներին, թե ուղղորդումներին: Օրինակ, զինդատախազության 4 քննիչների մասնակցությամբ իր նկատմամբ կիրառված բռնությունների մասին նախկին մեղադրյալ Հարություն Հարությունյանի՝ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովում ինչեցրած հայտարարությունից անմիջապես հետո զինդատախազը հրավիրեց մամուլի ասուլիս եւ փորձեց հավաստիացնել, թե դա իրականությանը չի համապատասխանում: «Թե մեկուսարանում իրականում նրան ծեծել են, թե ոչ՝ հաստատապես ասել չեմ կարող: Այսինքն՝ չեմ բացառում, որ խոշտանգումներ գուցե եւ կիրառվել են: Բայց ասում եմ, որ զինդատախազության քննիչների կողմից նրա նկատմամբ բռնություններ չեն կիրառվել: Ուղղորդում մեր քննիչների կողմից չի եղել»,- 2001 թ. դեկտեմբերի 26-ի մամուլի ասուլիսում հայտարարել էր զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանը:

Մինչդեռ այսօր երեւան են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք ոչ միայն վիճարկում են զինդատախազի նշյալ հավաստիացումների անկեղծությունը, այլ նաեւ վկայում, որ նախաքննության փուլում կատարված անօրինականությունների մասին Գագիկ Ջհանգիրյանը նվազագույնը իրազեկված է եղել ... Մասնավորեցնելով՝ նշենք, որ նախաքննության փուլում «Հոկտեմբերի 27»-ի գործով մեղադրյալների հետ միեւնույն խցերում նստել են ոչ միայն «սետկա» կոչվածները, այլեւ գաղտնի ձայնագրառվել նրանց բոլոր խոսակցությունները, առօրյան (ըստ որոշ տեղեկությունների, նաեւ մեկուսարանի քննչական սենյակում տեղի ունեցած խոսակցությունները, հարցաքննությունները), եւ դրանց սղագրություններն արդեն վաղուց են գտնվում «Հոկտեմբերի 27»-ի գործով նախաքննություն իրականացնող քննչական խմբի տրամադրության տակ, իսկ այդ սղագրություններից պարզ երեւում է, թե նախկին ո՞ր մեղադրյալը ո՞ր օրվա հարցաքննությունից վերադառնալիս է դժգոհել կատարված բռնություններից, ե՞րբ եւ քանի՞ անգամ է խնդրել բուժօգնություն, ե՞րբ ի՞նչ ցուցմունք է պարտադրվել: Ասել է թե՝ այդ սղագրությունները փաստացի վկայությունն են այն բանի, որ անօրինականությունները նախկին մեղադրյալների երեւակայության արգասիքը չեն, որ ֆիզիկական բռնություններ, ուղղորդումներ, այդ թվում՝ նաեւ զինդատախազության քննիչների մասնակցությամբ, ցավոք, եղել են: Եվ այս ամենին տեղյակ լինելով հանդերձ՝ Գագիկ Ջհանգիրյանը միջոցներ չի ձեռնարկել՝ պարզելու, թե ո՞ւմ նախաձեռնությամբ են տեղի ունեցել ուղղորդումները, ովքե՞ր են փորձել նախաքննությունը խիստ ընդգծված ուղղությամբ տանել, այն է՝ իբրեւ «Հոկտեմբերի 27»-ի կազմակերպիչներ ներկայացնել երկրի նախագահ Ռոբերտ Քոչարյանին եւ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին, չի խոչընդոտել, որ վկաները, մեղադրյալները, երբեմն նաեւ վերոնշյալ քննիչների ուղղեկցությամբ, արժանանան քննչական խմբի անդամ չհանդիսացող ինչ-ինչ գործիչների սեւսակցությանը: Ավելին, բավական ջերմեռանդությամբ ցայսօր շարունակում է պաշտպանել այդ քննիչներին՝ թույլ տալով, որ նրանք շարունակեն մասնակցել անջատված մասով ընթացող քննությանը: Սա էլ հիմք է տալիս ենթադրելու, որ զինդատախազը ոչ միայն իրազեկ է եղել իր ենթակաների կողմից կատարվող ապօրինություններին, այլ նաեւ իր ուրույն դերակատարությունն է ունեցել դրանցում:

Հետեւապես, զինդատախազության քննիչներին պատասխանատվության ենթարկելու հարցի բարձրացմանը զուգահեռ անխուսափելի է նաեւ զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանի պաշտոնանկությունը: Քանզի, եթե անգամ ընդունենք, որ Ջհանգիրյանը տեղյակ չի եղել իր ենթակաների կողմից կատարվող անօրինական գործողություններին եւ անգամ նշյալ սղագրություններին, ապա դա ամենեւին չի մեղմացնում նրա պատասխանատվության չափը: Ավելին, լրացուցիչ անգամ ապացուցում է, որ նա պարզապես բարոյական իրավունք չունի շարունակելու պաշտոնավարումը, քանզի չի կարողացել նման կարեւորագույն գործի քննության ընթացքում կանխել իր ենթակաների ինքնագործունեությունը, թույլ է տվել, որ իրենից թաքցնեն կարեւորագույն փաստեր, փոխարենը «հաշվետվություններ» ներկայացնեն բոլորովին այլ անձանց: Իսկ այդպիսի դեպքեր, ըստ չճշտված տեղեկությունների, եղել են, եւ ներկայացվել են հենց այն անձանց, ովքեր այսօր ջանք ու եռանդ չեն խնայում՝ խոչընդոտելու նախաքննության փուլում կատարված անօրինականությունների բացահայտումը՝ փորձելով դա ներկայացնել իբրեւ քաղաքական հետապնդում:

Ասել է թե՝ հանրապետական դատախազությունը եւս այսօր հայտնվել է բավական դժվարին վիճակում, երկընտրանքի առաջ: Կամ անտեսել քաղաքական հետապնդումներ իրականացնող մարմնի պիտակավորմանն արժանանալու վտանգն ու մինչեւ վերջ իրականացնել օբյեկտիվ քննություն՝ բացահայտելով «Հոկտեմբերի 27»-ի գործով նախաքննության ընթացքում տեղի ունեցած անօրինությունների ողջ շղթան եւ դրանց կատարողներին՝ անկախ նրանց ներկայիս կամ նախկինում զբաղեցրած հասարակական դիրքից, պաշտոնից եւ կոչումից: Կամ տեղի տալ հանցավոր ռեժիմին եւ ավելորդ աղմուկից, գլխացավանքից խուսափելու համար գործը փակել, ուղարկել արխիվ, ասել է թե՝ պարտակել իրենց հայտնի դարձած անօրինությունները եւ դառնալ այդ շղթայի մի մասնիկը:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

Ժողովածուներ՝ դատողների եւ դատվողների համար

Շատ շուտով մեր համաքաղաքացիները հնարավորություն կունենան իրենց ոտնահարված իրավունքները պաշտպանել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

Իսկ թե ինչպես պետք է ներկայացնել գանգատը, որպեսզի այն ընդունվի եվրոդատարանի կողմից եւ դառնա քննության առարկա՝ լավագույնս ներկայացված է ՀՀ Սահմանադրական դատարանի փոխնախագահ Վլադիմիր Հովհաննիսյանի հեղինակած «Մարդու իրավունքների եվրոպական դատարան» գրքում: Ավելին, գրքում շարադրված են ոչ միայն գանգատ ներկայացնելու պայմանները, կարգը, այլ նաեւ գանգատի քննության առանձնահատկություններն ու իրավաբանական հետեւանքները:

Իսկ «Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի» ժողովածուն, որի հեղինակը կրկին Վլ. Հովհաննիսյանն է, կարծում ենք, նախեւառաջ օգտակար կլինի մեր դատական եւ իրավապահ համակարգի համար: «Ճանաչելով Եվրոպական դատարանի իրավազորությունը, Հայաստանի պետական կյանքում տեղի կունենա աննախադեպ իրադարձություն. դատարանի որոշումները եւ վճիռները, որոնք ունեն վերպետական բնույթ, կատարման տեսակետից մեզ համար կդառնան պարտադիր: Եվրոպական դատարանի որոշումները եւ վճիռները, ինչպես ցանկացած այլ դատարանի որոշում կամ վճիռ, բոլոր կողմերը չէ, որ ընդունում են խանդավառությամբ: Առավել եւս, որ հաճախ դրանք պետություններին պարտավորեցնում են տուժող կողմին վճարել արդարացի փոխհատուցում, որը կարող է լինել նաեւ բավականին խոշոր գումար. վճիռները նաեւ որոշակի կերպով վնասում են պետության միջազգային հեղինակությանը:

Այդուհանդերձ, սա այն դեպքն է, երբ այս կամ այն պետությունը որքան շատ պարտվի եվրոպական դատարանում, դրանից այնքան շատ կշահի ժողովրդավարությունը տվյալ երկրում, դրանում այնքան ավելի շատ կամրապնդվեն մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները»,- խոստովանում է ՍԴ փոխնախագահն իր ընթերցողներին:



Ինչ խոսք, ոչ մի պետության, այդ թվում նաեւ Հայաստանի համար բոլորովին ցանկալի չէ, որ նրա պետական մարմինների ակտերը կամ պաշտոնատար անձանց գործողությունները գանգատարկվեն մարդու իրավունքների եվրոպական դատարանում, սակայն դրանից խուսափելու միակ միջոցը մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների բարեխիղճ կատարումն է ամբողջովին հաշվի առնելով եվրոպական դատարանի վճիռները: Հետեւապես, սույն ժողովածուն մեր դատավորների համար պետք է դառնա սեղանի գիրք:

Սեփ. լր.

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Անհիմն լուրեր

Ի հեճուկս շրջանառվող լուրերի ՆԳ փոխնախարար Հովհաննես Վարդյանը հրաժարական ներկայացնելու մտադրություն չունի: Այս մասին մեր թղթակցի հետ զրույցում հավաստեց անձամբ Հ. Վարդյանը՝ հրաժարվելով մեկնաբանել ապրիլի 18-ին տեղի ունեցած միջադեպը եւ այն ուսումնասիրելու համար ՆԳՆ-ի ու դատախազության համատեղ հանձնաժողովի աշխատանքները:

Սակայն մեզ հաջողվեց պարզել, որ հանձնաժողովը, որը գլխավորում են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ժիրայր Խառատյանը եւ ՆԳ փոխնախարար Արարատ Մահտեսյանը, արդեն ավարտել է ծառայողական քննությունը եւ առաջիկա օրերին հանդես կգա զեկուցմամբ: Դրա արդյունքում քրեական գործի հարուցումը քիչ հավանական է. մեր ունեցած տեղեկություններով, հանձնաժողովում առավել գերակայող է միջադեպի մասնակիցներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու տեսակետը:

Սեփ. լր.

Փորձում են վերակենդանացնել

Կրթության ոլորտում վերջին տարիների գործընթացներին հետևելիս տպավորություն է ստեղծվում, թե հանրակրթությունից եւ բուհականից զատ, այլ մակարդակի կրթություն մեզ մոտ գոյություն չունի: Միջին մասնագիտական եւ հատկապես նախամասնագիտական (պրոֆտեխուսումնական) կրթությունը հիշատակող գրեթե ոչինչ չկա: Հարկաւոր է, որ եթե 90-ական թվականներին հանրապետությունում ունեինք նախամասնագիտական կրթության 91 հաստատություն, որտեղ սովորում էր ավելի քան 23 հազար ուսանող, ապա 2000-ին՝ ընդամենը 56 հաստատություն եւ 5 հազար ուսանող:

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այս կրթօջախների հանդեպ հետաքրքրության անկման առաջին փուլը հաջորդեց խորհրդային պետականության անկմանն ու տնտեսական ճգնաժամին, ինչը բնական էր: Հետագայում դրանց հանդեպ անտարբերությունը սկսեց ավելի խորանալ, եւ ոչ միայն այն պատճառով, որ այստեղ պատրաստվող մասնագետներին ապագան ոչինչ չէր խոստանում, այլեւ քանի որ հասարակությունն արդեն սկսել էր տարանջատվել ունեւոր եւ ունեզուրկ բեւեռների, ու մինչ վերջիններս հազիվ օրվա հացի խնդիր էին լուծում, ունեւորները ձգտում էին միայն բուհ, մանավանդ որ արդեն սկսվել էր նաեւ համատարած «բուհականացման շարժումը»:

Այսպիսով, մինչ բուհերն ու միջին մասնագիտական կրթօջախները, պետական հստակ քաղաքականության բացակայությունից օգտվելով, կարողացան ժամանակին համընթաց ներմուծել նոր մասնագիտություններ կամ վերանվանվել քոլեջների այդպիսով պահպանելով իրենց գոյությունը, նախամասնագիտական ուսումնական հաստատությունները, տնտեսական կյանքի անկման՝ փաստացի չգոյության պայմաններում, կատարյալ անուշադրության մատնված, ամբողջությամբ քայքայվեցին:

Եվ այժմ, երբ արդյունաբերությունը սկսել է որոշակիորեն աշխուժանալ, տեխնիկական մասնագիտացման նոր կադրերի պատրաստման անհրաժեշտությունն աստիճանաբար նկատելի է դառնում, կառավարությունը կարծես հիշել է երբեմնի պրոֆտեխուսումնարանների մասին: Նախորդ տարի օգոստոսին կառավարության կողմից հաստատված ծրագրի համաձայն, սկսվել ու ներկայումս շարունակվում է միջին եւ նախնական մասնագիտական կրթության համակարգի ռացիոնալացման ծրագիրը: Այն հիմնականում ուղղված է նախամասնագիտական կրթությանը:

«Կրթության մասին նոր օրենքի համաձայն, այս կրթական մակարդակի համար ինքնուրույն, առանձին ուսումնական հաստատություն նախատեսված չէ, ուստի առաջին հերթին պետք է առկա վիճակը համապատասխանեցել օրենքին»,- ասաց ԿԳՆ միջին եւ նախնական մասնագիտական կրթության բաժնի պետ Արամ Ավագյանը: Ըստ այդմ, շուրջ 60 պրոֆտեխուսումնարաններ արդեն վերակազմակերպվել են. նրանց մի մասը, միանալով հանրակրթական ավագ դպրոցներին, կազմավորել են արհեստագործական հոսքեր, մյուս մասը միավորվել է քոլեջներին: Բաժնի պետի հավաստմամբ, լուծարվել են միայն 4-5 ՄՏՈՒ-ներ (մասնագիտական տեխնիկական ուսումնարաններ), սակայն դրանց ուսցիոնալացման ծրագիրը դեռեւս չի ավարտվել, մասնավորապես՝ ինչ-ինչ խնդիրներ կան դրանց իրավական նոր կարգավիճակի առնչությամբ: Ենթադրվում է, որ այսպիսով ավելի քան 30 դպրոցներում կունենանք արհեստագործական հոսքեր, սակայն դրանք, բնականաբար, չեն ապահովի լրիվ մասնագիտական կրթություն: Նախնական մասնագիտական կրթությունը համապատասխան որակավորմամբ, պետք է ապահովեն քոլեջները՝ դասավանդելով նաեւ ժամանակին պրոֆտեխուսումնարաններում ուսուցանվող մասնագիտություններ: Այսուհանդերձ, միանշանակ է, որ նախնական մասնագիտական կրթության կազմակերպումը եւ այս համակարգի վերակենդանացումն առայժմ բավական բարդ է, քանի որ մեր հասարակության մեջ աշխատահարաբերությունների դաշտը կանոնավորված, համակարգված չէ, չկա կադրային առաջարկ-պահանջարկի որեւէ մեխանիզմ: «Մենք փորձում ենք, առանձին գերատեսչությունների, պետական հիմնարկների, զբաղվածության ծառայությունների եւ մասնավոր գործատուների հետ համագործակցելով, մեզ համար որոշակիորեն հստակեցնել աշխատուժի շուկայի կադրային պահանջարկը: Սակայն հատկապես վերջիններիս հետ կադրերի պատրաստման պատվերի հարցում համագործակցության եզրեր առաժմ գտնել չի հաջողվում՝ գուցե համապատասխան գիտակցության բացակայության պատճառով: Միանշանակ է, որ համակարգի արդյունավետ գործունեության ապահովման ուղղությամբ դեռ շատ պետք է աշխատել»,- ասաց Ա. Ավագյանը:

Միանշանակ է, որ նախնական մասնագիտական կրթության կազմակերպումը եւ այս համակարգի վերակենդանացումն առայժմ բավական բարդ է, քանի որ մեր հասարակության մեջ աշխատահարաբերությունների դաշտը կանոնավորված, համակարգված չէ, չկա կադրային առաջարկ-պահանջարկի որեւէ մեխանիզմ:



Սոչիի քոլեջում կբացվի հայկական բաժին

Սոչիում վերջերս հիմնադրված բազմազգ քոլեջում սեպտեմբերին կբացվի նոր՝ հայկական բաժին, որտեղ տարածաշրջանի հայկական դպրոցների համար կպատրաստվեն տարրական կրթության ուսուցիչներ:

«ՌԴ կրթության նախարարությունը Սոչին հայտարարել է փորձարարական կրթական գոտի, որտեղ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում են ուսումնական զանազան ծրագրեր, եւ խթանվում է նոր տեսակի կրթական հաստատությունների կայացումը: Այս ծրագրերի շրջանակներում էլ բացվեց բազմազգ քոլեջը, որն ունի երկու բաժին: Երրորդը կլինի մեր «Տարրական կրթության ուսուցիչ» հայկական բաժինը: Համարվում է, որ կրթությունը կարող է բազմազգ այս տարածաշրջանում կայունացնող դեր ունենալ. դրա համար հիշյալ ծրագրերը նպատակաուղղվում են այն բանին, որ հենց առաջին դասարանից տարբեր էթնոսներ ներկայացնող աշակերտները ոչ միայն հաղորդակցվեն իրենց ազգային կրթությանն ու մշակույթին, այլեւ ծանոթանան ու շփվեն այստեղ ապրող մյուս ազգերի մշակույթին»,- ասաց ԿԳՆ Սփյուռքի բաժնի պետ Յուրա Նավոյանը:

Սոչիի տարածաշրջանում այժմ գործում է 30 կրթական հաստատություն էթնոմշակութային որոշ ուղղվածությամբ: Հատկապես մեծ թիվ են կազմում հայկական հաստատությունները: Մասնավորապես Սոչիում ունենք 6 հայկական կրթօջախներ: Դրանցից մեկը զուտ հայկական դպրոց է, որտեղ ազգային ծրագրերով ուսուցումն ամբողջությամբ տարվում է հայերենով: Մյուս 5-ը հայաշատ բնակավայրերում գործող դպրոցներ են, որոնք ունեն հայկական բաժիններ, ու քանի որ դրանցում հայկական բաժիններն ավելի շատ են, քան ռուսականները, դրանք նույնպես, ըստ էության, հանդիսանում են հայկական կրթօջախներ: Հիշյալ 6 դպրոցներից զատ, հայոց լեզու դասավանդվում է եւս 12 դպրոցում:

Ինչեւէ, Սոչիի քաղաքապետարանի կրթության վարչության եւ բազմազգ քոլեջի տնօրինության հետ այժմ մշակվում են հայկական նոր բաժնի ուսումնական պլանը եւ առարկայական ծրագրերը: Բացի այդ, քոլեջի մյուս ֆակուլտետների համար եւս պետք է մշակվի հայկական մշակույթի պատմության հակիրճ դասընթացի ծրագիր, որպեսզի այս բաժիններում ուսանող այլազգի մանկավարժները, որոնք հետագայում աշխատելու են նաեւ հայ երեխաների հետ, ծանոթ լինեն մեր մշակույթին ու պատմությանը: Այս ծրագրերի նախապատրաստման համար արդեն երկու հայ մասնագետներ գործուղվել են Սոչի, որտեղ տարրական կրթության մեթոդիկա եւ հայկական մշակույթ առարկաներով վերապատրաստման դասընթացներ են անցկացրել հայկական դպրոցների 25 ուսուցիչների համար: Ընդսմին, նրանք նաեւ ընտրել են 6 ուսուցչի, որոնք երաշխավորվել են ապագայում քոլեջի նոր բաժնում դասավանդելու համար:

Ինչպես տեղեկացրեց Յու. Նավոյանը, համագործակցության սույն ծրագրերը հստակեցնելու եւ դրանց շարունակականությունն ապահովելու նպատակով առաջիկայում ՀՀ ԿԳՆ-ի եւ Սոչիի քաղաքապետարանի միջեւ կստորագրվի գործնական ծրագիր: Ըստ այդմ, նախարարությունն ու Սոչիի քաղաքապետարանի կրթության վարչությունը համատեղ պարտավորություն կստանձնեն հայկական դպրոցները դասագրքերով ապահովելու, ուսումնական ծրագրեր մշակելու, յուրաքանչյուր տարի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաեւ աշակերտական փոխայցելություններ կազմակերպելու վերաբերյալ:

Ի դեպ, մինչ սույն ծրագրի ստորագրումը, ԿԳ նախարարության հրավերով արդեն իսկ ապրիլի 24-ին Երեւան են ժամանել հայկական դպրոցների ավարտական դասարանների 20 աշակերտներ 5 ուսուցիչների ուղեկցությամբ: Մեկշաբաթյա այցը սկսվել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրից, որտեղ նրանք Սոչիի հայկական դպրոցների անունից հարգանքի տուրք են մատուցել Եղեռնի զոհերի հիշատակին:

Լ. Գ.

Կրթաթոշակներ հայագետներին

Հայ օգնության միությունը ավանդույթ է դարձրել Հայաստանի բուհերում հայագիտական առարկաներ ուսանող մի քանի տասնյակ առաջավոր ուսանողների կրթաթոշակ նշանակելը:

Այս տարի եւս ավանդույթը չխախտվեց: Ապրիլի 20-ին ՀՅԴ «Սիմոն Վրացյան» կենտրոնում Հայ օգնության միության շրջանային վարչության ատենապետուհի Նելլի Բաղդասարյանը հասանելիք գումարը հանձնեց 60 ուսանողների:

Ողջունելով ուսանողներին Ն. Բաղդասարյանը կարեւորեց հատկապես այդ ոլորտում ուսումնառությունը, ինչը շատ կարեւոր է ասպարեզի զարգացման առումով:

Հաջողություն մաղթելով նրանց նա հույս հայտնեց, որ առաջիկայում ակնկալվում է ընդլայնել այս ծրագիրը եւ ներառել նաեւ այլ մասնագիտությունների ուսանողների:

Մեզ հետ զրույցում Ն. Բաղդասարյանը նշեց, որ թեեւ հնարավորություն չկա ամբողջությամբ ստանձնել ուսման վարձի վճարը, սակայն մեր պայմաններում այս նվազագույնն էլ թեթեւացնում է ուսանողների հոգսը:

Սեփ. լր.

Խամրեց Շահումյանի հույսը

Արցախի խնդիրն իր շուրջը համախմբեց նրանց, ովքեր հակառակվեցին պատմության սովորական ընթացքին, հաշտվողական տրամադրությանը եւ իրենց անկոտրում հավատով ու խելահեղ նվիրվածությամբ անհնարին հաղթանակներ բերեցին, կարողացան սովետական թմբիրից զարթնեցնել ժողովրդին: Շահեն Մեղրյանը, ապրելով այդ հողում, շատ լավ գիտեր Արցախի ու արցախցու վիճակը, գիտեր նաեւ, որ արդեն փլուզվող Սովետական Միության ղեկավարների կողմից հաշտեցման փորձերն անօգուտ են, եւ պատրաստվեց իր տունը պաշտպանել: Շահումյանն ազատագրելու գաղափարի եւ Շահենի՝ ազդեցիկ ու բնատուր զինվորական տաղանդով օժտված կերպարի շուրջ համախմբվեցին շատերը:

Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Շահենի զինակից, Շահումյանի պաշտպանության շտաբի պետ Սերգեյ Չալյանը պատմում է, որ 1991 թվականի ամռանը ինքը Շահումյան էր մեկնել մորը տեսնելու: «Հենց այդ ժամանակ էլ ծանոթացա Շահեն Մեղրյանի հետ: Ես, լինելով զինվորական, տպավորված էի, թե ինչպես են ենթարկվում ու սիրում քաղաքացիական անձին:

Դա հրամանատարի համար մեծ պատիվ է, եւ ոչ բոլոր զինվորականներին է տրված: Նա գրավում էր մարդկանց սերը եւ մեծ ժողովրդականություն էր վայելում, թեեւ շատ համեստ կերպար էր, պարզապես շուտ լեզու էր գտնում... Հենց սկզբից Շահենն իմ առջեւ խնդիր դրեց տղաներին զինվորական գործին վարժեցնելու: Իսկ ավելի ուշ ես մնացի Շահումյանում՝ վարակված Շահենի կերպարով»:

Շահեն Մեղրյանը չհուսահատվեց նույնիսկ Շահումյանի անկումից հետո, երբ ոմանց խելքին փչեց մեղադրել իրեն: «Մեր հետախուզությունը պարբերաբար պարզում էր, որ ադրբեջանական զինուժն ու տեխնիկան օր օրի ավելանում էին:- պատմում է այն ժամանակ Բուզլուխ գյուղի գյուղխորհրդի նախագահ եւ ընդհանուր հրամանատար Գեղամ Մուրադյանը:- Հայաստանի նախկին իշխանավորները հուսադրեցին, որ մարդուժ, զենք եւ ուղղաթիռներ կուղարկեն, որպեսզի զոհեր քիչ լինեն: Ցավոք, օգնությունն ուշացավ, եւ մենք չկարողացանք պահել Շահումյանը»:

Շահենի կազմակերպմամբ իրականացավ այն, ինչը մի շարք ժողովուրդների պարագայում դարձել է արդեն ռազմական դասագրքերի նյութ: Ձեւավորվեցին հայդուկային ջոկատները, որոնք պարզապես կենաց-մահու կռիվ մղեցին թշնամու թիկունքում, օղակի մեջ ու այդ անճնազոհ հերոսականությամբ թույլ չտվեցին, որ որեւէ ադրբեջանցի բնակություն հաստատի Գյուլիստանի սուրբ հողում: Շահենը առաջին շարքում լինելով՝ իր օրինակով վարակեց շատ ու շատ շահումյանցիների, եւ վերջիններս եկան փաստելու, որ Շահումյանի զավակները իրենց երկրից փախուստ չեն տվել, այլ մի մարտ են պարտվել, իսկ ճակատամարտը՝ երբեք:

Շահեն Մեղրյանի համար Շահումյանի ետգրավումը անհնար չէր թվում: Նա չխառնվեց իշխանական խարդավանքներին, այլ էլ ավելի դժվար գործի լծվեց՝ իր շուրջը հավաքելով անդավաճան ընկերներին: «Շահենը բեղերը ծիգ տվող մարդ էր,- ասում է այժմ արդեն գլխավոր շտաբի պետի տեղակալ, գնդապետ Սերգեյ Չալյանը:- Նա գրագետ զինվորական էր, նաեւ՝ քաղաքական գործիչ եւ Արցախի անկախացման փուլում կարեւոր դերակատարում ուներ: Բայց այնքան պարզ մարդ էր: Ինչպես ծրագրում ու մշակում էր օպերացիաները, այնպես էլ իրականացնում էր՝ զենքը ձեռքին, բոլոր տղաների կողքին»:

Շահումյան, հակառակորդի թիկունք... Հերթական ուղղաթիռային թռիչքը վերջինը դարձավ նրա համար: Վերջինն էր իր մարտական ընկերներից շատերի համար:

Շահեն Մեղրյանը զոհվեց 1993 թ. ապրիլի 17-ին: «Շահենը Գյուլիստանի մարտից հետո պատրաստվում էր մի քանի օրով թռչել Հայաստան: Ուղղաթիռի վրա կրակում էին, եւ ես խնդրեցի հետածգել: Նա չլսեց՝ «մեզ չեն կարող խփել»: Ընդամենը 800 մետր թռիչքից հետո խփեցին: Շահենը զոհվեց...»,- ու լռում է Չալյանը:

«Ես կորցրեցի ոչ միայն մարտական ընկերոջս. Շահենի մահով խամրեց Շահումյանն ազատագրելու հույսը: Համոզված եմ, որ եթե Շահենն ապրեր, այսօր մենք կլինեինք Շահումյանում,- ասում է Գեղամ Մուրադյանը:- Դրանով չեմ թերագնահատում մեր մարտիկներին, բայց մեզ պակասում էր մեծ քաղաքական գործիչը: Ցավոք, նրա նպատակը չիրականացավ, բայց մենք՝ մեր հողի համար կռվողներս, դեռ հույս ունենք իրագործելու այն: Սա մեր ուխտն է, մեր հաղթանակը լիարժեք չէ»:

Բայց Շահենի թռիչքը կիսատ մնաց լոկ ֆիզիկական առումով: Նրա հոգին ճախրում է Շահումյանի երկնքում՝ իբրեւ ահուսարսափ հակառակորդի, իբրեւ զգուշացում թշնամուն, որ Գյուլիստանն անտեր չէ, եւ վերադարձն անխուսափելի է:

ՋԱՎԱԽՔ

Վերականգնված աղոթատան բացումը

Վրաստանում պահպանված հայկական մշակութային բազմաթիվ հուշարձաններ երբեւէ բարվոք վիճակում չեն եղել, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո սկսվեց մեր պատմաճարտարապետական հուշարձանների հափշտակումը: Վրաստանի տարածքում գտնվող յուրացված հայկական եկեղեցիների թիվն արդեն անցնում է երեք տասնյակից:

Ջավախքի երկրամասը հայկական պատմաճարտարապետական հուշարձաններով առավել հարուստ շրջաններից է, այստեղ եկեղեցիներ, վանքեր ու մատուռներ կան գրեթե բոլոր բնակավայրերում: Այդ սրբատեղիների մեծ մասը միանավ հորինվածքով մատուռներ են: Խորհրդային իշխանության տարիներին Ջավախքում գտնվող աղոթատների մեծ մասն ավերվել է կամ վերածվել պահեստի: Այսօր հինավուրց երկրամասում հոգեւոր-եկեղեցական կյանքը վերելք է ապրում, եւ ջավախքցի գործարար երիտասարդների ու այլ բարերարների տրամադրած միջոցներով վերականգնվում եւ բացվում են նորանոր աղոթատներ: Այսպես վերականգնվեց եւ ապրիլի 6-ին Հայ Առաքելական եկեղեցու հավատավոր զավակների առջեւ իր դռները բացեց Մերենիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ աղոթատունը (Կոտրած ժամ), որն ավերվել էր դեռեւս 12-րդ դարում: Դարեր շարունակ Մերենիայի եւ շրջակա զուտ հայաբնակ գյուղերի բնակչությունը այդ հնավայր-սրբատեղիում է նշել սուրբ Զատիկը, ինչը վկայում է, որ հնում աղոթատունը չափազանց կարեւոր նշանակություն է ունեցել տեղի հայության կյանքում:

Ս. Գրիգորի Լուսավորիչ աղոթատան բացման հանդեսին ներկա էին հարյուրավոր հյուրեր, որոնք եկել էին Ռուսաստանի տարբեր քաղաքներից, Ուկրաինայից, Հայաստանից եւ Ջավախքին մերձակա շրջաններից: Հանդիսության ընթացքում ելույթ ունեցան Մերենիայի Մեսրոպ Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Կամո Ասլանյանը, նույն դպրոցի ուսուցիչ, բանաստեղծ Գեւորգ Հայասան եւ ուրիշներ: Միջոցառման վերջում Մերենիայի միջնակարգ դպրոցի սաները կատարեցին «Մեր հայրենիքը», որի հնչյունների ներքո էլ բացվեց աղոթատունը:

Ս. Գրիգոր Լուսավորիչ աղոթատան բացումը մեծ նվեր էր Ախալքալաքի առաքելական հավատքի 57 հայկական գյուղերի բնակիչների համար:

Արտակ ՄԱՂԱԼՅԱՆ

Մեծ Բրիտանիայի դեսպանը այցելեց Ջավախք

Ապրիլի 23-ին Սամցխե-Ջավախք էր ժամանել Վրաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան տիկին Բարնա Ջոունսը: Սամցխե-Ջավախքում Վրաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ Թեյմուրազ Մոսիաշվիլու հետ Ախալցխայում հանդիպելուց հետո դեսպանը ժամանել է Ախալքալաք:

Ախալքալաքում տիկին Բարնա Ջոունսը ներկա է եղել Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի Ախալքալաքի գրասենյակի բացմանը: Նա հանդիպում է ունեցել նաեւ Ախալքալաքի «Բարեփոխումների եւ ժողովրդավարության զարգացման համագործակցության» կենտրոնում, ուր ծանոթացել է վրաց լեզվի ուսուցման՝ բրիտանական կառավարության կողմից հովանավորվող գործընթացին:

Տիկին Բարնա Ջոունսը հանդիպել է նաեւ Ախալքալաքի շրջանային վարչության նախագահ Արտյուշ Համբարձումյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Ջավախքին հուզող սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական բնույթի հարցեր:

Տեղական ինքնակառավարման մասին անորոշություն Ջավախքում

Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հրամանով հունիսի 2-ին երկրում անցկացվելու են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ջավախքում, սակայն, դեռեւս հստակեցված չէ, թե տեղական կառավարման եւ ինքնակառավարման մարմինների մասին ինչպիսի օրենքով են անցկացվելու ընտրությունները: Ջավախքի տեղական ինքնակառավարման մարմինները, բնակչությունը, հասարակական-քաղաքական կազմակերպությունները պաշտոնապես իրազեկված չեն այն մասին, որ խորհրդարանի բյուրոյի նիստում խմբակցությունների մեծամասնությունը մերժել է քննարկել տեղական ինքնակառավարման մասին նոր օրենքի նախագիծը: Նշենք, որ տեղական ինքնակառավարման մասին մերժված օրենքում կարեւորվում էր շրջանի ղեկավարի ընտրության տարբերակը: Իսկ նախագահը եւ խորհրդարանի մեծամասնությունը պնդում են, որպեսզի հաստատվի շրջանի ղեկավարին նշանակելու տարբերակը:

Մինչ Վրաստանի այլ շրջաններում նախընտրական աշխատանքներն արդեն սկսվել են, Ջավախքում դեռեւս պաշտոնապես չեն տեղեկացված տեղական ինքնակառավարման ձեւի մասին: Իսկ ընտրություններին քիչ ժամանակ է մնացել:

ՀՕՄ-ի հովանավորությամբ անվճար բժշկական սպասարկում Ախալքալաքում

Ապրիլի 20-22-ը ջավախցիների համար օգտակար ձեռնարկով հանդես եկան ՀՕՄ-ը եւ Երեւանի «Դիագնոստիկա» բժշկական կենտրոնը: ՀՕՄ-ի հովանավորությամբ «Դիագնոստիկայի» բժիշկ, ռադիոլոգ, Ավանի մանկական պոլիկլինիկայի վարիչ Վալերի Աբրահամյանը անվճար սպասարկում էր կազմակերպել Ախալքալաքի կենտրոնական հիվանդանոցում:

Վ. Աբրահամյանի հավաստմամբ նման միջոցառումները ապագայում պարբերական բնույթ կունենան:

Հաղթանակների ճանապարհը

Յեղասպանությունը մեր ազգի մեծագույն ողբերգությունն էր առաջին հերթին էթնիկ ամբողջության իսախտմամբ եւ պատմական հայրենիքի մեծ մասի կորստով: Սակայն Յեղասպանությունը այլ բազմաթիվ ողբերգական հետեւանքներ եւս ունեցավ, որոնցից գլխավորը ազգի մշակութային կենսագործունեության բնականոնության ընդհատումն էր: Խոսքը միայն արեւմտահայ մտավոր սերունդի գլխովին ջախջախման մասին չէ, որի հետեւանքով իրենց բնականոն շարունակությունը չունեցան արեւմտահայ գրականությունն ու մշակույթը: Նաեւ ծնունդ առավ նոր՝ սփյուռքյան մշակույթը, այլեւ կորսվեց մշակույթը սնուցող գենետիկ ակունքը՝ հողը: Պակաս ողբերգական չէ Յեղասպանության ներկայությունը մեր հավաքական գիտակցության եւ անհատի ենթագիտակցության շերտերում:

Հովհաննես
ԵՐԱՆՅԱՆ

Հաղթանակը արցախյան հերոսամարտում կարեւոր դեր կարող էր ունենալ, դառնալ պատվաստուկ Յեղասպանության՝ մեր ենթագիտակցության մեջ շարունակվող մորմոքի դեմ դիմադրողականության համար, եթե չլիներ դրա նշանակությունը սոցիալական դժգոհությամբ վարագուրելու՝ մեր իշխանությունների «շնորհը»:

Յեղասպանությունից հետո վերացավ մտքի ազատ թռիչքի հենարանը, որովհետեւ այնուհետ մտավոր ամեն մի խիզախում պետի դեմ առ դեմ կանգներ մեր ողբերգությանը, հարաբերվեր եւ տանուլ տար, որովհետեւ վերջինս դաժանությամբ շատ ավելի ամեհի է, քան կարող էր լինել մշակութային ձեռնարկումի չափը: Որպեսզի մշակույթի շրջանակում սպառվեր ենթագիտակցության մեջ Յեղասպանության շարունակականությունը, զուտ սպիացնող ժամանակը քիչ է: Անհրաժեշտ է համարժեք հաղթանակ, որպեսզի պատմությունը միայն որպես պատմություն ընկալվի, այլ ոչ թե մեզ հետ ապրող եւ մեր տեսակին ու մտածողությանը կերպ տվող գործոն:

Յեղասպանության փաստի հետ միայնակ մնալու պահին հայ մտավորականը նման է ճանապարհների խաչմերուկում կանգնածի: Մեկը ազգին հրաժեշտ տալու փորձն է, հարցի շրջանցումը, սակայն այս խուսափումը ընդամենը ձեւացում է, որովհետեւ մեզանում ղեռ չի եղել վերազգայինի միակատար հաղթանակ եւ չի էլ կարող լինել: Մյուս ճանապարհը դեպի վիհը գնալն է, այսինքն՝ Յեղասպանության փաստի՝ արվեստով կամ գրականությամբ հաղթահարման փորձը: Այս ճանապարհն էլ ի սկզբանե դեպի ձախողում էր տանելու, որովհետեւ դարձյալ վիհն ավելի խորն է, քան այն լցնել փորձող տաղանդի մեծությունը: Սա է պատճառը, որ չունենք, չենք էլ կարող ունենալ Յեղասպանությունը հաղթած գրականության կամ արվեստի գործ: Այս ճանապարհը գայթակղում է հիմնականում պակաս օժտված անհատականությունների: Առավել օժտված ստեղծագործողները զգում են իրենց առջեւ գոյացած անդունդը, որը չեն կարող հաղթահարել, եւ թեթեւ գրչով կամ վրձնով չեն փորձում բառի կամ գույնի խախուտ կամուրջ գցել: Այս նույն զգացողությունը այդ բառերով է ձեւակերպում ինքը՝ ստեղծագործողը:

-Յեղասպանությունը յոթ գլխանի մի հրեշ է, որ կրակ ու բոց է ժայթքում, եւ թույլ չի տալիս իրեն մոտենալ,- ասում էր Հրանտ Մաթեւոսյանը:

Գրողը հրաժարվում է կամ արդարացիորեն ուժ չի գտնում այդ կրակի մեջ մտնելու, սակայն Յեղասպանությունը չի դադարում լինել նրա ենթագիտակցության շերտերում եւ ուրեմն գրեթե բոլոր ստեղծագործություններում՝ միջնորդավորված, հայեցողաբար, անուղղակի, թափանցիկ:

Սա երրորդ ճանապարհն է, եւ բազմաթիվ քիչ թե շատ արժեքավոր ստեղծագործություններ է բերել: Այնուամենայնիվ, ոչ այնքան արժեքավոր, որպեսզի կարողանայինք ասել, թե դրանցում Յեղասպանությունը պարտություն է կրել: Մոտեցման մեկ այլ ձեւ է ինքնաբաղկման եղանակը կամ սեփական վերքի հանդեպ հեգնական վերաբերմունքը: Այդպես, Երվանդ Օտյանը «Լեւոն թագավորի սուրը» հրաշալի պատմվածքն է երկնում: Թեպետ հեղինակը նույնպես հաղթած մարդը չէ, սակայն պատմվածքի ջարդերից խելագարված հերոսը վերագտնում է առողջությունը հունական թանգարանում պահվող իր Լեւոն թագավորի սրի հետ մշտական երկխոսության միջոցով:

Առավել մոնումենտալ են Չարենցի «Երկիր Նաիրի»-ն ու Մահարու «Այրվող այգեստանները»:

Չարենցը, ըստ Մահարու, կարծում էր, որ ինքն իր Կարսը ավելի շարությամբ ու կծու է նկարագրել, քան Մահարին՝ Վանը մինչեւ «Այրվող Այգեստանները»: Գ. Մահարին, անշուշտ, առավել կծու վերաբերմունք է ունեցել Վանի ինքնապաշտպանությունը կազմակերպած հայ մեծ անհատների հանդեպ, սակայն Շահնուրին գրած նամակում նա արդարացիորեն նշում է. «Թանաքից ավելի արյուն եմ գործածել, այսինքն՝ արյունով եմ գրել»:

Այս բոլոր ճանապարհներից դուրս է, առանձին, մասնավոր մի երեւույթ է օրերս Յեղասպանության թանգարանում Ժանսեմի ներկայացրած ստեղծագործությունների հավաքածուն: Այսպիսի համարձակ քայլ ես հայ մշակույթի մեջ չեմ հիշում: Չեմ հիշում գոնե հայ կերպարվեստի պատմության մեջ: Սա մասնակի հաղթանակ է Յեղասպանության նկատմամբ, բայց Ժանսեմին հարկ է եղել բազմաթիվ այլ հաղթանակներ տանել արվեստների մայրաքաղաք Փարիզում, որպեսզի յոթանասունն անց տարիքում իրեն թույլ տա մենամարտի բռնվել մանկությունից տանջող ցավի հետ:

Հաղթանակը արցախյան հերոսամարտում կարեւոր դեր կարող էր ունենալ, դառնալ պատվաստուկ Յեղասպանության մեր ենթագիտակցության մեջ շարունակվող մորմոքի դեմ դիմադրողականության համար, եթե չլիներ դրա նշանակությունը սոցիալական դժգոհությամբ վարագուրելու մեր իշխանությունների «շնորհը»:

Յեղասպանության ճանաչման եւ հատուցման մեջ է բոլորիս ազատագրման ճանապարհը՝ մտավորական, ստեղծագործող, արվեստագետ՝ ազգայնական թե կոսմոպոլիտ:

Անտիպ կոմպոզիտորի մեկնությունը

Արդեն չորրորդ տարին է, ինչ մեկնարկել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնը: Անցնող չորս տարիների ընթացքում «Համազգային» հայ կրթական և մշակութային միության Հայաստանի գրասենյակը փառատոնի շրջանակներում հայրենիքում ներկայանալու, հայրենի բեմն ու հանդիսատեսին զգալու, հայրենի արմատներով սնվելու առիթ է ընձեռել հայ մշակույթի սփյուռքյան հատվածը ներկայացնող բազմաթիվ պարախմբերի, երգչախմբերի կամ արվեստագետների:

Փառատոնը շարունակվում է, շարունակվում են նաև մշակութային բացահայտումները:

Ապրիլի 19-ին Երևանի Կամերային երաժշտության տանը «Համազգայինի» Հայաստանի գրասենյակը ներկայացրեց հունահայ կոմպոզիտոր Հակոբ Փափազյանին, նրա խմբերգերը:

Հակոբ Փափազյանը ծնվել է Զմյուռնիայում 1904-ին: 1922-ին Զմյուռնիայի ջարդերի պատճառով ընտանիքի հետ տեղափոխվել և հաստատվել է Հունաստանում: Երաժշտական կրթություն ստացել է Աթենքի պետական կոնսերվատորիայում: Ստանալով բարձրագույն կրթություն նա գերադասեց ծառայել հայ համայնքին տասնամյակներ շարունակ հեռավոր Հունաստանում հնչեցնելով հայ երգը, այն դարձնելով հայապահպանության իր ուրույն հավատամքը:

1936-ին Հ. Փափազյանը ստանձնեց Աթենքի «Հայ մտքի տուն» երգչախմբի խմբավարությունը, իսկ 1946-1971թթ. 25 տարի շարունակ, ղեկավարեց Աթենքի «Համազգայինի» երգչախումբը:

Փափազյանը մահացել է 1974-ին, 70 տարեկան հասակում թողնելով երաժշտական պատկառելի ժառանգություն մեներգեր, խմբերգեր, օպերետ, օպերա:

Հակոբ Փափազյանի մահվանից անցել է 27 տարի, սակայն թե կենդանության օրոք, թե մահից հետո նա անհայտ անուն էր հայաստանյան երաժշտասերին ու երաժշտագետին:

Եվ Երևանի կամերային երգչախմբի կատարմամբ հնչեցին Հ. Փափազյանի տասներկու խմբերգերը «Համազգայինի» քայլերգ, «Գովք Հայաստանի», «Դանիել Վարուժան», «Հեգնանք», «Հոյ նար», «Մարո, գյուղի ծաղիկ», «Երազներու մեջ», «Երջանկության աղբյուր», «Մայիսի գիշեր», «Հոյ նանամ», «Հարսանեկան քայլերգ», «Հարսներգ»:

Դահլիճն անթաքույց հիացմունքով, զարմանքով ու նաև երկարատև ծափողջույններով էր անդրադառնում յուրաքանչյուր կատարման: Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ Երևանի կամերային երգչախմբի նուրբ կատարումները եկան հաստատելու, որ Հակոբ Փափազյանի երաժշտական ճաշակն ու մտածողությունը ձևավորվել են հայ երգի մեծերից մեկի Բարսեղ Կանաչյանի ավանդույթների շրջանակներում: Եվ եթե փաստենք, որ Բ. Կանաչյանը հայ երգի նահապետի Կոմիտասի աշակերտն էր, ապա միանգամայն հստակ կդառնա, թե ինչ ակունքներից է սնվել երգահան Հ. Փափազյանը:

Հանդիսատեսի ընդունելությունը գալիս էր հաստատելու այն անառարկելի ճշմարտությունը, որ ապրիլի 19-ը հունահայ կոմպոզիտոր Հակոբ Փափազյանի վերադարձի օրն էր, և մեր երաժշտական մատենադարանը իր դռները բացեց արժանի մի կոմպոզիտորի ու մտավորականի առջև:

Ունկնդիրը դահլիճից հեռացավ այն համոզմունքով, որ Հակոբ Փափազյանը այսուհետ մշակութային ներկայություն կդառնա Հայաստանում, և նրա գործերն իրենց մնայուն տեղը կգտնեն հայրենի երգչախմբերի երգացանկերում:

Ավելացնենք, որ այս գեղեցիկ ձեռնարկն իրագործելի դարձավ Հունահայոց ազգային վարչության և «Համազգայինի» Հունաստանի շրջանային վարչության հովանավորությամբ:

Լիլիթ ԳԱԼՍՏՅԱՆ

Կասպյան թնջուկից «արյան հոտ է փչում»

Կասպից ծովի կարգավիճակի որոշման շուրջ կրքերը հետզհետե բորբոքվում են ու սպառնում վերածվել լուրջ հակամարտության: Ապրիլի 23-24-ը մերձափնյա հինգ երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի, Ադրբեջանի, Թուրքմենստանի եւ Իրանի նախագահների՝ Աշգաբադում կայացած բարձր մակարդակի անպտուղ հանդիպումը նման հեռանկարի առնելու հիմքեր է տալիս:

Խաչատուր ՍՏԵՓԱՆՅԱՆ

Մինչ Իրանը եւ Թուրքմենստանը մյուս երկրներին կոչ են անում հավատարիմ մնալ գործող միջազգային պայմանագրերին ու Կասպից ծովի կարգավիճակը որոշելուց հետո միայն իրականացնել երկրաբանա-հետախուզական եւ էներգակիրների արդյունահանման աշխատանքները, Ադրբեջանը, Ռուսաստանի Դաշնությունը եւ Ղազախստանը, ինչպես երեւում է, հակված են իրենց հարցերը լուծել անջատ՝ «երկկողմ» համաձայնագրերի հիման վրա:

Այս «եռյակը» պահանջում է հավասարապես բաժանել Կասպիցի հատակը, իսկ ջրային ռեսուրսների օգտագործման վրա բաժանարար գծեր չդնել, ինչին Իրանը կտրականապես դեմ է: Ընդ որում, Իրանը վկայակոչում է 1921 թ. եւ 1940 թ. սովետա-իրանյան պայմանագրերը, որոնք շարունակում են գործել, ու ոչ ոք դրանք դեռեւս անվավեր չի հայտարարել:

Թերեւս, իրանական կողմին կարելի է հասկանալ. Կասպից ծովի անորոշ կարգավիճակը ձեռնտու է նրան այն առումով, որ թույլ չի տալիս մերձկասպյան ավազանի իր պոտենցիալ մրցակիցներին նավթային ոլորտում լուրջ ներդրումներ ներգրավել ու ավելացնել նավթի հանույթը: Իբրեւ ՕՊԵԿ-ի անդամ երկիր, բնականաբար, նա ամեն ինչ կանի, որպեսզի հետագայում եւս կասպիցի բաժանման խնդիրը մնա անլուծելի:

Սակայն ժամանակն անցնում է, եւ ռուսական ու արեւմտյան նավթային ընկերությունները չեն սպասում: Մասնավորապես, մեծ բրիտանական եւ ամերիկյան ընկերություններն արդեն ակտիվ հետախուզական աշխատանքներ են տանում Ադրբեջանի եւ Ղազախստանի նավթաբեր գոտիներում, ինչը հարուցում է Թուրքմենստանի եւ Իրանի դժգոհությունը: Ավելին, այս երկրները սպառնում են ուժային քայլեր ձեռնարկել: Դրանց շարքին պետք է դասել, մասնավորապես, անցյալ տարվա ամռանը իրանական օդուժի կողմից կասպիցի շրջանում անցկացրած գործողությունները, երբ պարսկական օդուժը ադրբեջանական հետախուզական նավերին հարկադրեց հեռանալ նավթաբեր գոտիներից, որից հետո «Բրիթիշ Փեթրոլեումը» անմիջապես դադարեցրեց հետախուզման աշխատանքները:

Առայժմ դժվար է ասել, թե ինչ հանգուցալուծում կստանա կասպյան թնջուկը: Սակայն մի բան պարզ է. կողմերից ոչ մեկը հեշտությամբ չի զիջելու:

Փակ դռների հետեւում ընթացած բավական թեժ քննարկումները դրա վկայությունն են: Թուրքմենստանի նախագահ Նիյազովը, որը Ադրբեջանի հետ վեճ ունի Կասպից ծովի մի շարք նավթահանքերի նկատմամբ սեփականության հարցում, նախազգուշացրել է, որ եթե խնդիրը չհաջողվի խաղաղ ճանապարհով կարգավորել, ապա Կասպից ծովից «արյան հոտ կգա»: Նրա հետ համաձայնել է Ղազախստանի նախագահ Նազարբաեւը, որը նույնպես նախազգուշացրել է Կասպից ծովի «հակամարտության գոտու» վերածվելու վտանգի մասին:

ՌԴ նախագահ Պուտինը հանդես է եկել միայն ծովի հատակը բաժանելու օգտին՝ առաջարկելով, որ ջրերն ազատ լինեն նավարկության ու ձկնորսության համար: Սակայն նրա հետ չի համաձայնել Իրանի նախագահ Խաթամին: Վերջինս հաստատել է իր երկրի նախկին դիրքորոշումը. Իրանը հավակնում է Կասպից ծովի առնվազն 20 տոկոսին:

Թեեւ հանդիպումից հետո երկրների ղեկավարներն ամեն կերպ փորձում էին համոզել լրագրողներին, թե առկա խնդիրները լուծելի են, եւ կարճ ժամանակում իրենք բոլորի համար ընդունելի եզրահանգման կգան, շատ դիտորդների կարծիքով, գոնե այս պահին (եւ տեսանելի ապագայում) նման լավատեսության համար քիչ հիմքեր կան: Թեկուզ այն պատճառով, որ կասպյան թնջուկն իր մեջ ներառում է ոչ միայն զուտ նավթային (տնտեսական ու ֆինանսական) հիմնախնդիրներ, այլեւ աշխարհաքաղաքական ու ռազմավարական լուրջ շահախնդրություններ: Իսկ տարածաշրջանի զարգացումների տրամաբանությունը բազմիցս է ապացուցել, որ գոնե Իրանի ու Ռուսաստանի համար ավելի շատ տնտեսական շահն է ծառայում քաղաքական շահին, քան հակառակը:

Թուրքիան՝ խաղաղարարության միջնորդ...

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը ժամանեց Միջին Արեւելք: Նա բանակցություններ ունեցավ Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի եւ պաղեստինյան իշխանության նախագահ Յասեր Արաֆաթի հետ՝ գտնելու համար պաղեստինա-իսրայելական արյունալի ճգնաժամի լուծումը:

Անշուշտ, ողջունելի է այդ բարդ ու մտահոգիչ հիմնախնդրի լուծմանը միտված ցանկացած առաջելություն: Սակայն խնդիրը քննարկում ենք օբյեկտիվորեն ու բնականաբար հարցնում ենք ի վերջո, ո՞վ է միջնորդը, ինչպիսի՞ հնարավորություններ ու կարողություններ ունի, միջազգային ընտանիքում ի՞նչ դիրք ու վարկ ունի: Սովորաբար միջնորդ են հանդիսանում այն կողմերը, որոնք կա՛մ գերտերություն են (այս հանգամանքը, բնականաբար, բոլոր դռները բացում է նրանց առջեւ), կա՛մ անաչառի ու չեզոքի վարկ են վայելում, հետեւաբար վստահություն են ներշնչում:

Արդյո՞ք Թուրքիան բավարարում է միջնորդության այս պայմանները:

Բնականաբար, Անկարան գերտերություն չէ (թեեւ ռազմական հզոր պետություն է), որպեսզի հաջողության հասնի իր նախաձեռնության մեջ, մանավանդ որ տվյալ դեպքում գերտերություն լինելը եւս ճգնաժամի լուծման գրավական չէ: Փաստորեն, Միացյալ Նահանգների արտգործնախարար Քոլին Փաուելը կամ Եվրամիության ընթացիկ նստաշրջանի նախագահ, Իսպանիայի արտգործնախարար Խոսե Պիկեն չկարողացան կասեցնել իսրայելական սանձարձակ ու ապօրինի արշավանքը պաղեստինյան շրջաններ:

Ինչ վերաբերում է երկրորդ տվյալին՝ անաչառությանն ու չեզոքությանը, ապա այս իմաստով Թուրքիան պարզապես խոցելի է: Այն Իսրայելի գլխավոր ու սերտ դաշնակիցներից է, հետեւաբար նրա դիրքորոշումը կողմնակալ է:

Անդրադառնանք վարկին: Ի՞նչ վարկի մասին է, սակայն, խոսքը: Թուրքիան ինչպե՞ս է հավակնում ճգնաժամերի լուծման միջնորդի դերին, երբ ինքն անձամբ նմանօրինակ ճգնաժամեր է դիմագրավում, մեծ պարտքեր ունի հույներին, քրդերին, հայերին: Եթե Անկարան համոզված է, որ խաղաղարար միջնորդի տվյալներ ունի, թող այդ փորձն սկսի Հայկական հարցի լուծումից, վերադարձնի իր բռնագրաված Արեւմտահայաստանի հողերը, ընդունի իր գործած Հայոց ցեղասպանությունը, հատուցի հայ ժողովրդի բոլոր իրավունքները եւ միայն այդ ժամանակ մտածի ուրիշների ճգնաժամերի լուծմանը միջամտելու մասին: Այլ խոսքով՝ թող ամեն մարդ նախ իր դռան առաջն ավլի...

«ԱԶԴԱԿ»

ԼՈՒՐԵՐ

Խաթաբը սպանվել է

Անվտանգության դաշնային ծառայության իրականացրած հատուկ գործողության հետեւանքով Չեչնիայում ոչնչացվել է միջազգային հայտնի ահաբեկիչ Խաթաբը: Այդ մասին երեկ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել են Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության հասարակական կապերի կենտրոնում: Գործակալության թղթակցի զրուցակիցները Խաթաբին անվանելով «ահաբեկչական գործունեության գաղափարախոս ու կազմակերպիչ», չեն ճշգրտել, թե ստույգ երբ է իրականացվել այդ գործողությունը:

Հայտնի ահաբեկիչ Խաթաբը ծնվել է 1970 թվականին Հորդանանում, հարուստ ընտանիքում, որը 1987 թվականին նրան ուղարկել էր ԱՄՆ:

1995 թվականի գարնանը նա հայտնվել էր Չեչնիայում, որտեղ շուտով գլխավորել էր արաբ վարձկանների բոլոր խմբավորումները եւ իր վերահսկողության տակ վերցրել անջատականների ֆինանսավորման հիմնական ուղիների վերահսկողությունը: Խաթաբի մասին ստուգապես հայտնի է, որ նա աչքի էր ընկնում գերիների ու պատանդների նկատմամբ անմարդկային դաժանությամբ:

«Իչքերիայի մատուցած հատուկ ծառայությունների» համար Խաթաբին «բրիգադային գեներալի» կոչում էր շնորհվել:

Թուրքիան մեծացնում է ազդեցությունը

Ադրբեջանը եւ Վրաստանը համաձայնագիր կստորագրեն անվտանգության ոլորտում համագործակցության մասին: Դա տեղի կունենա ապրիլի 29-ին Թուրքիայի սեւծովյան Տրապիզոն քաղաքում, որտեղ կհանդիպեն երեք պետությունների ղեկավարները Ահմեթ Նեջդեթ Սեզերը, Հեյդար Ալիեւը եւ Էդուարդ Շեւարդնաձեն: Փաստաթուղթը, ինչպես հաղորդվում է, նախատեսում է հարեւան երկրների փոխգործակցություն այնպիսի հարցերում, ինչպիսիք են ահաբեկչության դեմ պայքարը, կազմակերպված հանցագործությունը, զենքի մաքսանենգությունը:

Գագաթաժողովի ուշադրության կենտրոնում կլինի նաեւ Բաքու-Ջեյհան ուղեգծով նավթի փոխադրման նախագիծը: Դիվանագիտական աղբյուրներից ստացված տվյալների համաձայն, ծրագրվում է հանդիպմանը մշակել նավթամուղի անվտանգության ապահովման մեխանիզմ, որը նախատեսվում է անցկացնել Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի տարածքով: Խոսքը, մասնավորապես, օդային հնարավոր հարձակումից հակաօդային պաշտպանության միջոցներով դրա պաշտպանության մասին է:

Սպասվում է, որ համապատասխան համաձայնագիրը վերջնական տեսքով կստորագրվի հունիսին Ստամբուլում:

Ապրողները՝ Երեւանյան երկնակամարում

Գագիկ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նիկիտա Սիմոնյանը ֆուտբոլային լեգենդ է: Օլիմպիական խաղերի չեմպիոնի (1956թ.), ԽՍՀՄ յոթակի չեմպիոնի, վեցակի գավաթակրի, ԽՍՀՄ վաստակավոր մարզչի, սպորտի վաստակավոր վարպետի ծննդյան 75-ամյակին էր նվիրված «Արարատ-1973»-ի եւ ԽՍՀՄ վետերանների հավաքականների հանդիպումը: Սակայն հանդիսությունն անսպասելիորեն սկսվեց ավելի վաղ:

Խաղի նախօրյակին, երեկոյան Երեւանի «Մետրոպոլ» հյուրանոցում աշխույժ եռուզեռ էր: Ժամանում էին խորհրդային ֆուտբոլի հանրածանոթ դեմքեր, ողջագուրվում հոբելյարի հետ, անկաշկանդ մթնոլորտում զրուցում:

ՀԱՅԿ ՊՐԵՍ

Նիկիտա Սիմոնյան

Իմ բախտը բերել է

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել այս «խայտառակության» կազմակերպիչներին: Ինքս կողմնակից չէի, որ կրկին նշվի իմ հոբելյանը: Բանն այն է, որ անցյալ տարվա հունիսին Երեւանի «Հանրապետական» մարզադաշտում, «Արարատի» եւ Լեհաստանի հավաքականի վետերանների հանդիպման ժամանակ հանդիսավոր միջոցառում էր անցկացվել: Ապա հոկտեմբերին Մոսկվայում նշվել էր հոբելյանը:

Ընդառաջեցի բարեկամներիս ցանկությանը, քանի որ այս միջոցառումն առաջին հերթին մտերիմների հանդիպում է: Ընդ որում, միմյանց հետ կրկին շփվելու հնարավորություն են ստացել տարբեր սերունդների ներկայացուցիչները: Կրկին իմ կողքին են Մոսկվայի «Սպարտակի», ԽՍՀՄ հավաքականի խաղընկերներս:

Գաղտնիք չէ նաեւ, որ այստեղ է իմ սրտի կեսը: Հայաստանաբնակ բարեկամներիցս յուրաքանչյուրի հետ հանդիպումն ինձ հուզում է:

Ճիշտ է, ծննդյան օրը նշում են տարին մեկ անգամ, սակայն, ինչպես ասում են՝ Աստված երրորդություն է սիրում:

Հոբելյանների կազմակերպումը լավ է, սակայն վետերաններիս համար հեշտ չէ դրանց անմիջական մասնակիցը լինել: Տասը տարի առաջ նշում էինք Վիկտոր Ցարյովի 60-ամյակը: Նա դիմեց, որ մասնակցեմ «Սպարտակ» եւ «Դինամո» թիմերի վետերանների հանդիպմանը: Խնդրեցի, որ ինձ հանգիստ թողնեն: Վիկտորը չհամաձայնեց. «Ընդամենը տասը րոպե խաղադաշտ դուրս կգաս եւ վերջ»: Համոզեց: Մասնակցեցի գրոհներից մեկին եւ փորձեցի շունչս տեղը բերել: Իսկ հարավային տրիբունայում տեղ գբաղեցրած մարգասերներից մեկը բղավեց. «Սիմոնյան, անհրաժեշտ է վազել»:

Ինչեւէ, ինչպես Նիկոլայ Ստարոստինն էր հաճախ կրկնում՝ չկան մեծ մարզիչներ, այլ կան մեծ խաղացողներ: Առանց վերջիններիս՝ հնարավոր չէ որպես մարզիչ մեծ հաջողությունների հասնել: Այս առումով «Սպարտակում» եւ «Արարատում» իմ բախտը բերել է՝ աշխատել եմ տաղանդավոր ֆուտբոլիստների հետ:

ԽՈՍՔԸ՝ ՀՅՈՒՐԵՐԻՆ

Վիկտոր Ցարյով

Չերկյուղենք Սիմոնյանին մեծություն անվանելուց

Շատ բան լավ հասկանալով՝ երբեմն վախենում ենք բարձրաձայն արտահայտվել: Գիտենք, որ ֆուտբոլային մեծ անհատականություններ են Պելեն, Կրոյֆը, անգամ չխաղացող Ռոնալդոն: Սակայն երկյուղում ենք մեծություն անվանել Նիկիտա Սիմոնյանին: Իսկ նա իրոք այդպիսին է որպես ֆուտբոլիստ եւ մարզիչ: Լեգենդար դարպասապահ Լեւ Յաշինը նույնպես դա գիտեր եւ հպարտանում էր, որ հարձակվողը միայն մեկ գնդակ է կարողացել խփել իր պաշտպանած դարպասը: Դա նրա համար հաճելի էր:

Ուշագրավ է, որ խորհրդային ժամանակներում Սիմոնյանը եւ մենք մարզվում էինք ու խաղում որպես պրոֆեսիոնալներ, սակայն վարձատրվում էինք սիրող ֆուտբոլիստների կարգավիճակով: Տարօրինակ է, որ ամեն բան փոխվել է: Այժմ վարձատրվում են պրոֆեսիոնալներին հավասար, սակայն խաղում են սիրող ամենավատ ֆուտբոլիստների նման: Ն. Սիմոնյանն էլ է սեփական մաշկի վրա զգացել այդ անարդարությունը: Այսուհանդերձ, նրան սիրում էին որպես ֆուտբոլիստի, ստադիոն հաճախում հիմնականում հարձակվողի խաղը տեսնելու համար:

ARMENPRESS

Գենադի Լոգոֆետ

Մեր ուսուցիչը նման բան չէր սովորեցրել

Երբ Նիկիտա Սիմոնյանը «Սպարտակից» «Արարատ» տեղափոխվեց, մոսկովյան ակումբը քանդվեց: Հինգ տարի շարունակ չէինք հասկանում, թե թիմի հետ ինչ է կատարվում: Աննպատակ մարզումներ էին անցկացվում:

Ի դեպ, 1973 թվականին, երբ «Հրազդան» մարզադաշտում մրցում էինք արարատցիների հետ, արտասովոր միջադեպ գրանցվեց:

Մրցակից երկու ֆուտբոլիստ խաղադաշտի կենտրոնում վեճի բռնվեցին: Մրցավար Յուրի Սերգիենկոն մոտեցավ նրանց բաժանելու, սակայն մոռացավ սուլոցով դադար ազդարարել: Մինչդեռ, բոլորը այն կարծիքին էին, որ պետք է սպասել: Սակայն մեր թիմի հարձակվողն ուշադրություն չդարձրեց: Նա առաջ խոյացավ եւ գնդակն ուղարկեց ցանցից ներս: Մրցավարը դարպասի գրավում արձանագրեց: Դրությունը շիկացած էր: Եվ ահա, Անդրեասյանին հաջողվեց առաջին խաղակեսում դիպուկ հարվածով վերականգնել հաշվի հավասարակշռությունը: Իսկ ընդմիջմանը մարզիչը մեղադրեց ինձ եւ Կիսելյովին ասելով, որ մենք Սիմոնյանի զավակներն ենք եւ խաղը «տալիս ենք»: Մեզ Սիմոնյանը նման բան չէր սովորեցրել: Իսկ այդ հանդիպումը «Արարատը» շահեց 3:1 հաշվով:

Անդրո Կավազաշվիլի

Գարեջուր էինք խմում եւ հաղթում

Ուրախ եմ, որ հրաշալի մի երկրում եմ, որի շատ զավակներն աշխարհահռչակ գիտնականներ, մշակույթի գործիչներ, մարզիկներ են: Երջանիկ եմ, որ մարզվել եմ Նիկիտա Սիմոնյանի ղեկավարությամբ: Անմոռաց են 1969-1971 թվականները, երբ իմ կողքին է եղել մի մարդ, որից ոչ մի անգամ կոպիտ խոսք, չար դիտողություն չեմ լսել: Եթե որեւէ բան նրան դուր չէր գալիս, շատ նրբանկատորեն էր հրամցնում իր տեսակետը: Այդպիսի մարզչին չէր կարելի խաբել, վշտացնել:

1969 թվականին ծանրաբեռնված մարզումներ էինք անցկացնում: Խաղերն էլ կայանում էին եռօրյա ընդմիջումից հետո: Ես, Լոգոֆետը, Իվանովը, Խուսայինովը հանդիպումից հետո ուղեւորվում էինք մոտակա գարեջրի գործարանը փոքր-ինչ լիցքաթափվելու: Հաջորդ օրերին շոգեբաղնիքում էինք ծերբազատվում էինք ավելորդ կիլոգրամներից: Ն. Սիմոնյանը մեր չարաճճիության մասին գիտեր, սակայն ոչինչ չէր ասում: Նա վստահ էր, որ ճակատագրական որեւէ սխալ չենք կատարի: Իսկ մեր թիմը շարունակ հաղթում էր: Եվ այդպես էր ողջ մի շրջանի ընթացքում: Ն. Սիմոնյանը մեր հպարտությունն է, ուրախ ենք, որ կրկին նրա կողքին ենք: Դա մեծ պատիվ է:

Լեւոն Իշտոյան

Մարզիչը չէր խանգարում խաղալ

Նիկիտա Սիմոնյանի հետ հեշտ էր աշխատելը: Նա բոլորի հանդեպ հայրական վերաբերմունք ուներ: Որպես մարզիչ չէր խանգարում, որ խաղանք. նրա միջամտությունը գրեթե չէինք զգում: Իսկ դառնում էինք ԽՍՀՄ չեմպիոն եւ գավաթակիր: Սա է Սիմոնյան մարզչի մեծության գաղտնիքներից մեկը:

«Կեցցե արքան»

Նիկիտա Սիմոնյանի գլխավորությամբ Երեւանի «Արարատը» դարձավ ֆուտբոլի ԽՍՀՄ չեմպիոն եւ գավաթակիր: Խորհրդանշական էր, որ ճանաչված ֆուտբոլիստի եւ մարզչի 75-ամյա հոբելյանի տոնակատարության ծրագրով, այդ ամենի ականատես Երեւանի «Հրազդան» մարզադաշտում, մրցեցին «Արարատի» եւ ԽՍՀՄ հավաքականի վետերան ֆուտբոլիստները:

Միջոցառումն սկսվեց թատերականացված ներկայացմամբ, որին մասնակցեցին պատանի մարզիկներն ու պարային համույթները: Ֆուտբոլային օրհներգի ուղեկցությամբ խաղադաշտի կենտրոնում պատկերվեց 75 թվանշանը: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին կյանքին անժամանակ հրաժեշտ տված «Արարատի» պաշտպան Ալեքսանդր Կովալենկոյի հիշատակը: Ապա հանդիպման մրցավարներ Վալերի Բուտենկոյի, Հենրիկ Նալբանդյանի եւ Վլադիմիր Շառոյանի ուղեկցությամբ մրցասպարեզ մտան ֆուտբոլիստները: Երկու թիմերի կազմում աստղերը շատ էին: Ու թեեւ ժամանակի ընթացքում նրանք կորցրել էին իրենց արագաշարժությունը, սակայն փայլը պահպանել էին: Ամեն խաղակեսը 35 րոպեանոց էր: Դարպասները խփվեց տասը գնդակ, յուրաքանչյուրը հնգական:

Հաշիվը 19-րդ րոպեին բացեց սպարտակցի Գեորգի Յարցեւը: Ապա 11 մետրանոց տուգանային հարվածով հավասարակշռությունը վերականգնեց երեւանցիների ավագ Հովհաննես Զանազանյանը՝ 1:1: Երկրորդ կեսն ավելի գոլառատ էր: Արարատցիներից աչքի ընկան Սերգեյ Պողոսյանը (40 եւ 59-րդ րոպեներին), Լեւոն Իշտոյանը (43), Պողոս Գալստյանը (58), հյուրերից Անդրեյ Յակուբիկը (39, 56), Իգոր Բելանովը (41), Ալեքսանդր Բուբնովը (61):

ՀԱՅԿ ՊՐԵՍ

Ի դեպ, 8 համարի մարզազգեստով ԽՍՀՄ հավաքականի պատիվը պաշտպանում էր երեւանցի Խորեն Հովհաննիսյանը:

Եվ այսպես, բարեկամական մրցամարտում գրանցվեց ոչ-ոքի 5:5:

Ուշագրավ էր հանդիսության ավարտը: Կողմերին հնարավորություն էր տրվել 11 մետրանոց նշանակետից իրացնելու մեկական հարված: Բելանովը «պատահաբար» վրիպեց: Իսկ ահա արարատցիներից գնդակին մոտեցավ հանդիսության հերոսը Ն. Սիմոյանը, խորհրդանշակլսն 75 հւսմարի մարզաշապիկով: Նրա փոխանցումով պատանի ֆուտբոլիստը գրավեց Ալեքսանդր Պրոխորովի պաշտպանած դարպասը:

Վերջում հոբելյարը երկու թիմերի ներկայացուցիչներին հանձնեց խորհրդանշական գավաթներ: Իսկ շոուն եզրափակեց Թամար Գվարցետելեի «Կեցցե արքան» երգը:



ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ

Խոյ - Շաբաթվա սկզբին, կախված հանգամանքներից, հարկ կլինի արագ կողմնորոշվել: Ընդհանուր առմամբ, այս շաբաթ պետք է զգույշ լինել. այդ դեպքում կարող եք շատ օպերատիվ հարցեր լուծել: Փոթորկալի կանխազգացումը կպահպանվի մինչեւ ամսվա վերջը: Շաբաթվա վերջին շատ Խոյերի տրամադրությունը ,ոփոխական կլինի, ինչպես եղանակը:

Ցուլ - Ամբողջ շաբաթվա ընթացքում հիմնականում զբաղված կլինեք ծառայողական խնդիրներով, հատկապես գործունեության ոլորտի ընդլայնմամբ եւ համապատասխան գործընկերների որոնմամբ: Կարելի է լրացուցիչ փողի եւ բարեկամներից շռայլ նվերների հոսք ակնկալել: Շաբաթ օրը լավ կլինի կենցաղային իրերի գնում նախատեսել:

Երկվորյակներ - Կսկսվի մեկ ամիս առաջ ստացած տեղեկությունը վերաիմաստավորելու ժամանակը: Այժմ շատ բան կբացահայտվի ստեղծված իրադրության մեջ: Չորեքշաբթի Երկվորյակներից ոմանց գլխում հիանալի միտք կծագի կրթության բարձրացման կամ գործնական ուղեւորության մասին: Աշխատանքի վերաբերյալ նոր առաջարկություններ կլինեն շաբաթվա վերջում. դա լավ նշան է: Նշանակում է ապագայում ձեզ հաջողություն է սպասվում:

Խեցգետին - Անձնական կյանքում դժվար կլինի խուսափել սուր իրավիճակներից: Խեցգետին-բիզնեսմենների գործնական բանակցությունները. ամենայն հավանականությամբ, կավարտվեն հաջող համաձայնագրի կնքմամբ:

Առյուծ - Շաբաթվա սկզբին Առյուծները չափազանց զգացմունքայնորեն կվերաբերվեն մասնագիտական եւ անձնական հաջողություններին: Երկուշաբթի շատ հավանական են զգացմունքային պոռթկումները, հարաբերությունների բուռն պարզաբանումները աշխատավայրում եւ ընտանիքում: Երեքշաբթի ձեզ համար իրական հնարավորություն կստեղծվի հարթելու բոլոր սուր անկյունները սիրելի մարդու հետ, ինչպես նաեւ փայլուն դրսեւորվելու աշխատանքում:

Կույս - Երկուշաբթի օրվանից արդեն կհայտնվեք աշխատանքային պրոբլեմների կիզակետում: Արագ եւ դյուրին կարող են վերակազմակերպվել այն Կույսերը, ովքեր իրենց մեջ մշակել են ակնթարթային հակազդեցություն եւ ոչ ստանդարտ մտածողության ունակություն: Աշխատանքային առօրյայի լարվածությունն իրեն զգալ կտա արդեն շաբաթվա վերջին:

Կշեռք - Շաբաթվա սկզբին դուք կարող եք բախվել ղեկավարության եւ գործընկերների կոշտ պահանջներին: Սակայն նկատի ունեցեք, որ ամբողջ շաբաթվա ընթացքում Կշեռքների կյանքը կունենա ռոմանտիկ երանգավորում:

Կարիճ - Կարծես թե այս շաբաթ կհաջողվի անհրաժեշտ քանակությամբ դրամ կուտակել եւ խոշոր գնում կատարել տան համար, ինչպես նաեւ մեծ վերանորոգում սկսել բնակարանում: Շաբաթակեսին տեղի կունենա մասնագիտական առումով կարեւոր իրադարձություն:

Աղեղնավոր - Շաբաթվա սկզբին ստիպված կլինեք լարվել. շատ աշխատանք կա անելու: Առավել դժվար խնդիրների լուծման համար կընտրեք գործընկերներ, ավելի լավ կլինի Խոյերից կամ Կարիճներից: Ապրիլի 27-ը բացառիկ նպաստավոր օր է ցանկացած տեխնիկա, էլեկտրոնիկա, ինչպես նաեւ ավտոմեքենա ձեռք բերելու համար:

Այծեղջյուր - Անհրաժեշտ է շփվելը գործընկերների եւ մոտ մասնագիտության տեր անձանց հետ: Միայն այդպես կարող եք հասնել ձեր հետաքրքիր գաղափարների իրականացմանը: Ապրիլի 27-ին կարելի է նախատեսել խոշոր գնում:

Ջրհոս - Շաբաթվա սկզբին Ջրհոսները հմտություն կդրսեւորեն բոլոր գործերում: Ապրիլի 30-ին չնախատեսված փոփոխություններ կլինեն աշխատանքում: Հավանական է ձեզ սպասվում է աստիճանի բարձրացում:

Ձուկ - Ձկներից ոմանք կընկնեն մելամաղձության գիրկը: Շաբաթվա վերջին տելի կունենան իրադարձություններ, որոնք ձեզ դուրս կբերեն այդ վիճակից: Հնարավոր է անսպասելի հյուրեր ունենաք:

Visagiste Hair Styliste
PAUL AYVAZIAN



Maquillage - Nettoyage - Tattouage
Cyre - Acrelic - Manicure - Pedicure
Rue Arax, Tel.: 01/265178 - 03/239899
e-mail : paul@coiffureliban.com

SNACK ARARAT

- Բոլորովին իւրայատուկ ոճով պատրաստուած ուտելիքներ:
- Եւրոպական, Արաբական եւ Հայկական ոճով սենտուիչներ:
- Չրի սպասարկութիւն մինչեւ տուներն ու գրասենեակները:

ԲԱՐԻ ԱԽՈՐԺԱԿ

SNACK ARARAT

Տրա - Հեռ. 01-243290